Ազգ
Azg
1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2012 ՇԱԲԱԹ 215(5067)
ISSN: 1829-1651

# «Լեռնային Ղարաբաղ. Խաղաղություն եւ երկխոսություն» կլոր սեղան ֆրանսիական Սենատում

Նոյեմբերի 29-ին Ֆրանսիայի Սենատում կազմակերպվել է կլոր սեղան՝ «Լեռնային Ղարաբաղ. խաղաղություն եւ երկխոսություն» խորագրով: ԱԳՆ հաղորդագրության համաձայն, հանդիպմանը մասնակցել են Ֆրանսիայի Սենատի բարեկամական խմբի նախագահ Ֆիլիպ Կալտենբախի նախաձեռնությամբ պաշտոնական այցով Ֆրանսիայում գտնվող Հայաստանի ԱԺ հայ-ֆրանսիական պատգամավորական բարեկամության խմբի անդամները, ֆրանսիացի սենատորներ, Սենատի պաշտոնյաներ, փորձագետներ եւ լրագրողներ:

Միջոցառումը բացել է բուլղար լրագրողուհի Ցվետանա Պասկալեւան, որն, իբրեւ ականատես, խոսել է պատերազմական իրադարձությունների մասին, որից հետո ցուցադրվել է նրա «Կբացվի՞ արդյոք առավոտը Ղարաբաղում» ֆիլմը: Այնուհետեւ ծավալված քննարկումներում ներկայացվել են ԼՂ հիմնախնդրի պատմական եւ աշխարհաքաղաքական ասպեկտները, առանձին խոսքերով հանդես են եկել ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին համանախագահ Բեռնար Ֆասիեն, ֆրանսիացի սենատորներ եւ հայ պատգամավորներ, ինչպես նաեւ պատմաբաններ ու փորձագետներ:

Կլոր սեղանի մասնակիցները կարեւորել են Արցախի ժողովրդի անվտանգությունը, խստորեն դատապարտել ռազմատենչ հայտարարությունները, ընդգծել Սաֆարովի զարհուրելի դեպքի անընդունելիությունը՝ ինչպես զուտ մարդկային արժեքների, այնպես էլ տարածաշրջանում փոխվստահության հաստատման տեսանկյունից:

Բանախոսներն առանձնակի ճեշտել են, որ այլընտրանք չի կարող լինել խաղաղությանը, եւ որ ներկայիս հրամայականն է նախապատրաստել հասարակություններին ոչ թե պատերազմի, այլ՝ խաղաղության: **Վ. Պ.**

# «Եղանակային պայմանները» կարծես թե լավ են ԼՂՀ-ում

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Տարածաշրջանային վերջին այցելությունը ԵԱՀԿ Մինսկի խումբը սկսեց Ստեփանակերտից, մինչդեռ նախման այցելության մեկնարկը Մինսկի խումբը հայտարարություն էր տարածել, թե «համանախագահները կայցելեն Հայաստան ու Ադրբեջան, ու, եթե եղանակային պայմանները թույլ տան՝ նաեւ Լեռնային Ղարաբաղ»: Հետեւաբար, եթե Ստեփանակերտ այցելությունը պայմանավորվում է եղանակային պայմաններով, մինչդեռ հակամարտության կարգավորման համար համանախագահները այցելում են միայն Հայաստան ու Ադրբեջան, ուրեմն, Ստեփանակերտը որոշակիորեն ստորադասվում է որպես հակամարտության կողմ: Սակայն վերջին պահին, փաստորեն, որոշում կայացվեց, որ դեսպաններ Ֆորը (Ֆրանսիա), Պոպովը (Ռուսաստան) եւ Բրայդեն (ԱՄՆ) պետք է այցելությունը սկսեն հենց Ստեփանակերտից:




Այս հանգամանքը խիստ կարեւոր է հատկապես այն համապատկերում, որ Փարիզում նոյեմբերի 27-ին կայացած Մինսկի խմբի համանախագահության եւ Հայաստանի ու Ադրբեջանի ԱԳ նախարարների առանձին-առանձին հանդիպումներից հետո տարածվեց հայտարարություն, թե միջնորդները կողմերին ներկայացրել են «նոր առաջարկներ», որոնք կքննարկեն իրենց (միջնորդների)՝ մոտ ժամանակներս տարածաշրջան այցելելու ժամանակ: Ու ամենեւին էլ պատահական չէ, որ միջնորդները անտեսեցին «եղանակային պայմանները»՝ այդ «նոր առաջարկները» առաջինը Ստեփանակերտի հետ քննարկելու համար:

Ի՞նչ կարող են լինել այդ «նոր առաջարկները», ընդ որում առաջարկներ, որոնց առկայությունը ադրբեջանական մեդիա դաշտը այդքան էլ մեծ հաճույքով չի հիշատակում:

Նախ, ելնելով այցելությունից հետո Մինսկի խմբի համանախագահության տարածած հայտարարությունից՝ «կողմերը համաձայնել են շարունակել աշխատանքը ԱԳ նախարարների մակարդակով», սա նշանակում է ղարաբաղյան բանակցություններում կողմերի մասնակցության աստիճանի որոշակի նվազեցում՝ նախագահների հանդիպումներից ԱԳ նախարարների հանդիպումներին անցնելով:

Տես էջ 8

# ԵԺԿ ղեկավարությունը խորհրդարանում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Երեկ Ազգային ժողովում տեղի ունեցավ «Խորհրդարանական ուղղվածությունը եւ համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ հանուն եվրոպական ինտեգրման. արժեքներ եւ փորձ» համաժողովը՝ Արեւելյան գործընկերության առաջնորդների երեւանյան գագաթաժողովի շրջանակում: Երիտասարդական խորհրդարանի եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներով հագեցած ԱԺ դահլիճում համաժողովը ողջունեցին Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանն ու Եվրոպայի ժողովրդական կուսակցության նախագահ Վիլֆրեդ Մարթենսը:**

Տես էջ 2



Վիլֆրեդ Մարթենս

# Դեկտեմբերի 1-ը՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օր

Այսօր ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրն է:

ՄԻԱՎ-ի փոխանցման դեպքերից Հայաստանը նույնպես անմասն չէ: Առողջապահության նախարարի տեղակալ Սերգեյ Խաչատրյանի փոխանցմամբ՝ 1988-2012 թվականների ընթացքում Հայաստանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 1359 դեպք, որից միայն 206-ը գրանցվել է այս տարի: ՄԻԱՎ վարակակիրների թվում գերակշռողը արական սեռի ներկայացուցիչներն են՝ 954 հոգի: ՄԻԱՎ վարակակիր կանայք 405-ն են, իսկ երեխաները՝ 26 հոգի: ՄԻԱՎ-ով վարակվածների կեսից ավելին ախտորոշման պահին եղել են 25-39 տարիքային խմբում:

**Ի. Պ.**

# Դիտորդ պետության կարգավիճակը Պաղեստինի առջեւ բացում է ՄԱԿ-ին անդամակցելու հեռանկարը

*Միաժամանակ հնարավորություն է տալիս, որ նա հանցագործությունների համար ՄԱԿ-ի միջազգային դատարանում դատապարտի Իսրայելին*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Գազայի հատվածի վրա նոյեմբերի 14-ին ձեռնարկած հարձակման 8-րդ օրը՝ նոյեմբերի 21-ին, Իսրայելը հրադադար էր հաստատել Պաղեստինի իսլամական դիմադրության շարժման՝ «Համասի» հետ: Նոյեմբերի 23-ին «**Ազգում**» այդ հարցին անդրադառնալիս զինադադարը համարել էինք Իսրայելի նկատմամբ «Համասի» հաղթանակը:



Քանի որ խաղաղ պաղեստինցիների անխնա սպանությունն արդարացնելու համար ԱՄՆ-ն ու Եվրոմիության առաջատար երկրները հարձակումներում անվերապահորեն պաշտպանում էին Իսրայելին, ուստի Գազայում զինադադարի հաստատումը միջազգային այս ուժերի նկատմամբ եւս հաղթանակ դարձավ, որը «Համասը» ձեռք բերեց տարածաշրջանի երկրների՝ մասնավորապես Եգիպտոսի եւ Իրանի անմիջական աջակցությամբ:

Նոյեմբերի լույս 30-ի գիշերը պաղեստինցիները ՄԱԿ-ում տոնեցին 2-րդ հաղթանակը՛ե՛ւ Իսրայելի, ե՛ւ ԱՄՆ-ի նկատմամբ: Պաղեստինը առանց անդամակցության ստացավ ՄԱԿ-ի դիտորդ պետության կարգավիճակը: Մինչ այդ դիտորդի կարգավիճակն ուներ Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը: Նոր հաղթանակը ձեռք բերվեց ձայների 138 կողմ, 9 դեմ հարաբերակցությամբ: Ընդ որում՝ հակառակ Վաշինգտոնի ջանքերի, որի կամքին, ի դեպ, ենթարկվելու պատրաստակամություն ցույց տվող Պաղեստինի Ինքնավարության ղեկավար Մահմուդ Աբբասը հակված էր հրաժարվելու ՄԱԿ-ում իր երկրի դիտորդ պետության կարգավիճակից, սակայն ստիպված տեղի տվեց պաղեստինյան կազմակերպությունների ճնշումներին:

Տես էջ 5

# «Գյուլբենկյան» հիմնադրամը՝ սիրիահայերին

**Նյու Յորքում կայացած տնօրենների խորհրդի նիստում «Գուլաբի Գյուլբենկյան հիմնադրամի» նախագահ Էդուարդ Գյուլբենկյան կրտսերը հայտարարել է, որ իր ընտանիքի կողմից 1935 թվին Նոր Գյուղում կառուցված «Վերժինե Գյուլբենկյան» ծննդատունը, որ մինչեւ վերջերս գործում էր, ժամանակավորապես պատրաստ է ծառայելու նաեւ հալեպահայ տարեց քաղաքացիների, որոնք տուժել են ռմբակոծությունների հետեւանքով: Այս մասին հաղորդում է Հակոբ Վարդիվառյանը «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի նոյեմբերի 17-ի համարում:**

**Էդուարդ Գյուլբենկյանը նաեւ տեղեկացրել է, որ Նյու Յորքում հիմնադրված «Գուլաբի Գյուլբենկյան հիմնադրամը» ընդհանուր առմամբ նեցուկ է կանգնել սիրիահայերի ուսումնական եւ առողջապահական կարիքներին, իսկ այժմ, երբ տագնապալի օրեր են ապրում սիրիահայերը, կարող է նաեւ այլ ծառայություններ մատուցել եւ միանալ համահայկական օգնության ծրագրերին:**

**Ծննդատան տնօրեն է նշանակվել Հալեպից Հովհաննես Հովհաննիսյանը: Հենց որ խաղաղությունը վերահաստատվի, Սիրիայում ծննդատունը իր սկզբնական առաքելությանն է վերադառնալու:**

Հ. Ծ.

ԱԶԳ

## Ընթացիկ

# Մարդասպան Սաֆարովի ներումը՝ տարածաշրջանում լարվածությանը նպաստող քայլ

*ԵՄ-Հայաստան խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի հայտարարությունը անդրադարձել է Սաֆարովին, Արցախին, հայ-թուրքական հարաբերություններին*

«Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն այլընտրանք չի կարող լինել», ասվում է Միլան Կաբրնոխի եւ Սամվել Ֆարմանյանի համանախագահությամբ ԵՄ-Հայաստան խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի 13-րդ բրյուսելյան հանդիպմանն ընդունված հայտարարությամբ:

Նոյեմբերի 28-29-ին տեղի ունեցած հանդիպման փաստաթղթի՝ տարածաշրջանի կայունության հարցերի առնչությամբ ենթաբաժնում նաեւ ափսոսանք է հայտնվում բանակցային գործընթացում առաջընթացի բացակայության առնչությամբ՝ շեշտելով «ստատուս քվոյից դեպի անվտանգ ու բարգավաճ ապագա առաջ շարժվելու կարեւորությունը»:

Հանձնաժողովն իր աջակցությունն է վերահաստատել Մինսկի խմբի համանախագահների ջանքերին ու մադրիդյան սկզբունքներին «առանց բացառության», ընդգծելով հակամարտության կարգավորման հասնելու կարեւորությունը՝ Հիմնարար սկզբունքների հիման վրա «որպես կարեւոր քայլ համապարփակ խաղաղ համաձայնագրի ուղղությամբ ապահովելու տեւական ու կայուն խաղաղություն»:

«Հանձնաժողովն ընդգծում է վստահության հաստատման միջոցների արժեքը՝ ներառյալ դիպուկահարների հեռացումը շփման գծից՝ ԵԱՀԿ հանձնարարականներին համապատասխան», ասվում է հայտարարության մեջ:

Փաստաթղթում կոչ է արվում շփման գծում միջադեպերի կանխման մեխանիզմ հիմնել, ինչպես նաեւ անկախ հետաքննություն իրականացնել: «Հանձնաժողովը շեշտում է, որ ԵՄ-ը պետք է ավելի ակտիվ դերակատարություն ունենա վստահության միջոցների հիմնման հետագա աջակցության հարցում՝ ղարաբաղյան հակամարտության բոլոր կողմերի միջեւ խաղաղության, հաշտեցման ու վստահության գաղափարները տարածելու համար, չլինելով ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ», ասված է հայտարարության մեջ՝ ընդգծելով «այդ համատեքստում ԵՄ ներկայացուցիչների, ներառյալ Եվրոպական խորհրդարանի անդամների համար տարածաշրջանի անվերապահ մատչելիության կարեւորությունը»:

Հայտարարությունն անդրադառնում է մարդասպան Ռամիլ Սաֆարովին Ադրբեջանում հերոսացնելու հանգամանքին, ափսոսանք հայտնելով Ալիեւ կրտսերի՝ Սաֆարովին ներում շնորհելու որոշման կապակցությամբ, ըստ որում, Ադրբեջանին նրա արտահանձնումից հետո հերոսացումը դիտարկում է ոչ միայն «որպես միջազգային իրավունքի ոգուն հակադիր, այլեւ տարածաշրջանում լարվածությանը նպաստող քայլ, որ սրում է անարդարության զգացումը»:

Ավելին, մտահոգություն է արտահայտվում, որ նման փաստերը կարող են վտանգել հաշտեցման փորձերը ու մարդկային շփումների առումով ապագայի ձախողումը:

Խորհրդարանական հանձնաժողովի հայտարարության մեջ նշվում է նաեւ հայ-թուրքական արձանագրությունների առնչությամբ ափսոսանք, շեշտելով ստորագրված արձանագրությունների վավերացման կարեւորությունը՝ «միակողմանի փակված սահմանի հետագա բացմամբ»: «Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացն ու ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցությունները չպետք է կապվեն իրար... նաեւ պետք է վերջ տրվի տարածաշրջանում որեւէ երկրի տնտեսական մեկուսացման քաղաքականությանը»:

Վ. Պ.

# Ռուս իրավաբան. Չհասկացա, թե Օսկանյանի գործով տուժողն ով է




Մոսկվայի պետական իրավաբանական ակադեմիայի պրոֆեսոր, ՌԴ արդարադատության նախարարության եւ ՌԴ բարձրագույն դպրոցի պատվավոր աշխատակից, պրոֆեսոր Սամվել Կոչոյին ԱԺ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավոր Վարդան Օսկանյանի փաստաբան Տիգրան Աթանեսյանը ներկայացրել է Վարդան Օսկանյանի գործով բոլոր փաստաթղթերը՝ ցանկանալով ստանալ չեզոք եւ օբյեկտիվ տեսակետ: Աթանեսյանի ներկայացմամբ՝ դա ընդունված պրակտիկա է արտասահմանում, երբ դատավորը կամ տուժողը ցանկություն են հայտնում չեզոք անձի տեսակետ, իրավական կարծիք լսել եւ հիմնականում դիմում են հեղինակավոր գիտնականների: Որ Կոչոյին հեղինակավոր մասնագետ է, փաստում է այն հանգամանքը, որ նա ՌԴ-ի քրեական իրավունքի առաջատար մասնագետն է եւ Ռուսաստանի քրեական օրենսգրքի մեկնաբանությունների հեղինակը: Թե ինչու են դիմել հենց ռուս փորձագետի՝ Աթանեսյանն ու Կոչոյին ասում են, որ երկու երկրների քրեական օրենսգրքերը միմյանց շատ նման են եւ գրեթե նույն մոդելի հիման վրա են գրված:

Երեկ «Պոստ սկրիպտում» ակումբում ռուս փորձագետն ասաց, որ փորձել է օբյեկտիվ լինել եւ զուտ իրավական տեսանկյունից ուսումնասիրելով հարցը հանգել է եզրակացության, որ այնտեղ չկան հանցագործության նշաններ, թե Վարդան Օսկանյանը յուրացրել է բարեգործական նպատակներով հիմնադրամին տրամադրված եւ իրեն վստահված առանձնապես խոշոր չափեի դրամական նիջոցներն ու հանցավոր ճանապարհով ձեռք բերված այդ միջոցներն օրինականացրել: «Ինչպե՞ս է հնարավոր նման մեղադրանք առաջադրել, երբ չկա մեկը, ում վնաս է հասցվել», հարցնում է Կոչոյին՝ հավելելով, թե իր համար անհասականալի է, թե ում է վնաս հասցրել Օսկանյանը՝ «Սիվիլիթասի՞ն», Հանթսմանի՞ն, հոգաբարձուների խորհրդի ներկայացուցիչ Կարապետյանի՞ն: «Ես այդպես էլ չգտա տուժող: Անհիմն է փողերի լվացման վերաբերյալ առաջադրված մեղադրանքը, քանի որ չկան փաստեր, որ այդ փողերը հասել են հիմնադրամին հանցագործ ճանապարհով: Պետք է փաստ լինի, որ այդ գումարներն անօրեն ճանապարհով են Հանթսմանից հասել», ասաց ռուս փորձագետը՝ հավելելով, որ չի ցանկանում պատասխանել՝ գործը քաղաքական ենթատեքստ պարունակում է, թե՞ ոչ: Կոչոյին որպես իրավաբան է հարցը վերլուծել ու փաստել, որ այնտեղ չկան մեղադրանքի հիմնավորումներ:

Օսկանյանի փաստաբանի ներկայացմամբ՝ գործն այս պահին գտնվում է նախաքննության փուլում: Մեկ շաբաթ առաջ Օսկանյանին կրկին հրավիրել են ԱԱԾ եւ ստուգել նրա 2001 եւ 2003 թթ. բանկային հաշիվները: «Մենք հանգում ենք այն եզրակացության, որ հիմա փորձում են Վարդան Օսկանյանի վրա էլի մի բան գտնել, ասենք, 1992-ին ո՞ւմ է ծեծել կամ ում հետեւից ի՞նչ է ասել, սա արդեն ծիծաղելի է», ասաց Աթանեսյանը՝ հավելելով, թե համոզված է, որ փորձագիտական եզրակացությունները որեւէ օգուտ չեն տա, քանի որ «իրավապահ մարմինները սահմանադրությամբ չեն առաջնորդվում, ուր մնաց իրավագետների տեսակետը լսեն»:

Հ. Հ.

ՀԱՄԱԺՈՂՈՎ

# ԵԺԿ ղեկավարությունը խորհրդարանում

*1-ին էջից*

**«Հայաստանն իր վարած հավասարակշիռ եւ կառուցողական քաղաքականությամբ տարածաշրջանային կայունության կարեւոր գործոն է»,- ասաց ԱԺ նախագահը: Իսկ Մարթենսը խոսեց եվրոպացիների սիրած բնորոշումներով, թե՝ պառլամենտը բոլոր քաղաքացիների տունն է, այլ ոչ թե միայն ընտրված պատգամավորների: Պառլամենտի դուռը բաց պետք է լինի բոլորի, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար, որոնք կամուրջ են քաղաքական գործիչների եւ ժողովրդի միջեւ: Քաղաքացիական հասարակությունը, որ պետք է պայքարի ժողովրդավարության, ռեֆորմների շարունակականության եւ այլ բաների համար, այնուամենայնիվ, ըստ պարոն Մարթենսի, պետք է իմանա, որ փոփոխություններն իրականացնելը շատ դժվար է. «Շատ մի մեղադրեք քաղաքական գործիչներին, որ ամեն ինչ միանգամից ու շատ արագ տեղի չի ունենում, բայց ճնշումը շարունակեք», դիմեց նա քաղաքացիական սեկտորին:**

**Համաժողովում, որը նախագահում էր «Եվրոնեսթում» հայկական պատվիրակության ղեկավար, ԱԺ հանձնաժողովի նախագահ Արտակ Զաքարյանը, տեղի ունեցավ հեռուստակամուրջ Ստոկհոլմի հետ, ինչպես նաեւ հնչեցին մի շարք հետաքրքրական ելույթներ: Օրինակ՝ ԵԺԿ փոխնախագահ Յացեկ Սարյուշ Վոլսկին, որ նաեւ «Եվրոնեսթ» խորհրդարանական վեհաժողովի փոխնախագահն է ու իր զեկույցը հենց կառուցել էր քաղաքացիական հասարակության համագործակցության վրա, կտրուկ էր մի շարք հարցերի պատասխանելիս:**

**Երբ նրան հարց տվեցին, թե թշնամի երկրներով շրջապատված՝ այնքան էլ չի ստացվում քաղաքացիական հասարակություն զարգացնելը, Յացեկ Վոլսկին հարցը տարավ իր հասկացած ուղղությամբ՝ նշելով, որ եթե ԼՂՀ հակամարտությունն է հարցի տակ, ապա այն «Եվրոնեսթի» կամ Արեւելյան գործընկերության ձեւաչափով բարձրացվելիք կամ լուծելիք հարց չէ: Ու «Եվրոնեսթի» վեհաժողովներում էլ պայմանավորվել են, որ «Եվրոնեսթը» չծանրաբեռնեն բախումների վերաբերյալ հարցերով: Պետք է առաջ գնալ այս մտայնություններից եւ փոխադարձ ընկերություններ ու համագործակցություններ ստեղծել: Անընդհատ պետք չէ խոսել ԼՂՀ հարցից, որի համար այլ ձեւաչափեր կան, պետք է զարգացնել քաղաքացիական հասարակությունը, առաջ նայել, գործընկերային հարաբերություններ զարգացնել գոնե հասարակությունների մակարդակով:**

**Նա բերեց իր երկրի՝ Լեհաստանի օրինակը, որի տարածքներից և՛ Գերմանիան, և՛ Ռուսաստանը ժամանակին գրավել են, բայց ժողովուրդները միմյանց հետ շփվում եւ ընկերություն են անում: Հարց հնչեց, թե «Եվրոնեսթում» ԼՂՀ-ին դիտորդի կարգավիճակ տալը միգուցե զսպաշապիկ լիներ Ադրբեջանի ռազմաշունչ պահվածքի համար: Վոլսկին դա միանգամից անհնար համարեց, քանի որ եթե ԼՂՀ-ն մասնակցի «Եվրոնեսթին»՝ «Եվրոնեսթը» կփլվի, Ադրբեջանը դուրս կգա այդ կազմակերպությունից: «Մեր նավը չծանրաբեռնենք, այն կխորտակվի, այդ հարցի համար ուրիշ ֆորմատներ կան», ասաց:**

**Ի դեպ, նա այն կարծիքին էր, որ եվրոինտեգրման գործընթացները Հայաստանում շատ արագ են կատարվում, ավելի արագ, քան իր երկրում՝ Լեհաստանում, անգամ նա բարի նախանձով է նայում Հայաստանին այդ առումով: Դահլիճից հնչած հարցերից մեկով փորձ արվեց պարզել Եվրասիական միության վերաբերյալ եվրոպաշտոնյայի տեսակետը. երիտասարդ խորհրդարանականներից մեկը հետաքրքրվեց, թե Եվրոպան Հայաստանին առաջարկում է ինտեգրում, այդ թվում՝ տնտեսական, նաեւ կա եվրասիական հեռանկարը, ինչպես պետք է վարվի Հայաստանը: Յացեկ Վոլսկին պատկերավորեց, թե Ռուսաստանում չգիտեն, որ Եվրամիությունը կայսրություն չէ՝ գաղութատիրական երկրների (Անգլիայի, Ֆրանսիայի) նման, այլ կամավորների միություն, որտեղ ուզում են միասնական լինել միասնական արժեքների շուրջը: Ընտրությունն էլ երկրինն է, ոչ ոք ոչինչ չի ստիպում: Ոչ մի հակասություն չկա այն բանի մեջ, որ հավասարապես կարելի է և՛ Ռուսաստանի, և՛ ԵՄ-ի հետ լավ հարաբերություններ ունենալ: Ո՛չ ԵՄ-ն է ստիպում, ո՛չ Ռուսաստանը, այլ առաջարկում են, պետք է տեսնել, թե ո՞րն է սրտամոտ, եվրոպական պատասխան տվեց եվրոպաշտոնյան:**

**Հետաքրքրական էր նաեւ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Դավիթ Դարչինաշվիլու տեսակետն այն հարցին ի պատասխան, թե հայերի հետ այնքան լավ հարաբերություններ չունի Վրաստանը, որքան Ադրբեջանի: Դարչինաշվիլու պատասխանի ենթատեքստը, կարելի է ասել, ուսուցողական էր, թե կան շահեր, օրինակ՝ էներգետիկ անվտանգության, ու լավ կամ վատ լինելը դրա հետ կապ չունի: Իսկ եթե էներգետիկ այլընտրանք լինի, այդ թվում՝ Հայաստանից, ապա դա միգուցե ավելի հեշտացնի փոխադարձ հարաբերությունները:**




*Յացեկ Սարյուշ Վոլսկի*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

# Կ. Պոլսի Սուրբ Փրկիչ հիվանդանոցը 180 տարեկան է

Կոստանդնուպոլսի (ներկայումս՝ Ստամբուլ) արվարձանում 180 տարի առաջ հիմնված Սուրբ Փրկիչ հիվանդանոցը գրեթե ամբողջ աշխարհում հայտնի հաստատություն է եւ համազգային համբավ ունի: Սուրբ Փրկիչը Մարմարա ծովի մոտակայքում է, «Կազլիչեշմե» երկաթուղային կայարանից ոչ հեռու, ենթակա է Եդիկուլեի (Ստամբուլի արեւմտյան արվարձան) Զեյթինբուրնու համայնքին:

Հիվանդանոցի պարտեզում կարելի է տեսնել հայերեն թերթ ընթերցող հայ ծերունիների, տարեց կանանց, իսկ ջրավազանի կարմիր ձկներին նայելիս թվում է, թե ժամանակը կանգ է առել: Ինչպես հիվանդները, ծերունիները եւս բնակվում են հիվանդանոցի կողաշենքերից մեկում:

Թուրքիայում հայերի կենսունակության ապացույց Սուրբ Փրկիչը հրաշքներ է գործում: Հիվանդանոցն Օսմանյան կայսրության ժամանակների վկան է, սակայն միակը չէ կայսրության նախկին մայրաքաղաքում: Թաքսիմ հրապարակի մոտակայքում է գտնվում Սուրբ Հակոբ հիվանդանոցը, որը պատկանում է Հայ կաթոլիկ եկեղեցուն:

1832 թվականի հունվարի 5-ին Կոստանդնուպոլսի հայ երեւելիները համախմբվեցին ամիրաներ Գազազ Արթինի եւ Հարություն Պեզճյանի շուրջը: Համայնքի ժողովրդագրական աճի պայմաններում որոշվեց կառուցել մայրաքաղաքի հայության համար նախատեսված հիվանդանոց. Եդիկուլեի այգեստաններում արդեն գոյություն ուներ հայկական եկեղեցի:

Հիվանդանոցը կառուցվեց ճարտարապետներ Կարապետ ամիրա Բալյանի (1800-1866) եւ նրա աներոջ՝ Հովհաննես ամիրա Սերվերյանի նախագծով, ինչպես նաեւ այն ժամանակվա Պոլսո պատրիարք Ստեփանոս Աղավնիի ջանքերով եւ ըստ օսմանյան սուլթան Մահմուդ Բ-ի հրովարտակի:

Մունիցիպալ հարստության դեր կատարող հիվանդանոցի չափերն են 194x94 մետր: Շենքի կառուցումն ավարտվել է 1834 թ. մարտի 31-ին, իսկ համանուն՝ Սուրբ Փրկիչ եկեղեցին հիվանդանոցի տարածքում հիմնադրվել է 1833-ին: 1906 թվականին, Օրմանյան պատրիարքի օրոք, վերակառուցված եկեղեցին նորոգվել է 2005-ին Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության օգնությամբ: Այդ մեկենասությունը շարունակվում է մինչեւ օրս: 1832-ից սկսած «Պարոն 5 տոկոսի» գերդաստանն ակտիվորեն բարեգործություն է անում ի նպաստ հիվանդանոցի: Ի դեպ, Սուրբ Փրկչի տարածքում հանգչում են Գալուստի ծնողները եւ հորեղբայր Սարգիս Սերովբեն:

Բարձունքի վրա 18 շենքեր զբաղեցնում են 13 հազար քառակուսի մետր մակերես, իսկ ընդհանուր տարածքը 20 հազար քառակուսի մետր է. Սուրբ Փրկիչը հայկական ամենամեծ հիվանդանոցային համալիրն է Հայաստանից դուրս: Անցել են ժամանակները, երբ հիվանդանոցի տարածքում մոմ եւ լուցկի էին արտադրվում եկեղեցու համար, գործում էր կոշիկի արտադրամաս: 1900-1910 թվականներին Սուրբ Փրկչում հրատարակվում էր տարեգիրք, որը պատմում էր Կոստանդնուպոլսի եւ ամբողջ կայսրության հայերի կյանքի մասին: Այս ամենն արտացոլված է հիվանդանոցի պատվո տաղավարում գործող թանգարանում: Վերջինս 2004-ին մեծ շուքով բացվեց Թուրքիայի վարչապետ Էրդողանի եւ մշակույթի նախարարի ներկայությամբ:



*Սուրբ Փրկիչ հիվանդանոցի ընդհանուր տեսքը*

Պոլսահայոց մեծ հիվանդանոցն ավելի շատ հայտնի է «Ազգային տուն» կամ «Գթության հարկ» անուններով եւ արժանանում է առանձնահատուկ ուշադրության: Հաստատությունն առաջատար է բարեգործության ասպարեզում, քանզի ամեն տարի քաղաքի հայկական ծխական համայնքները նրան ներկայացնում են կարիքավոր հայերի ցանկը: Հիվանդանոցից բացի, համալիրն ունի ծերանոց, զարկերակային հիվանդների խնամքի կենտրոն եւ հաշմանդամ երեխաների ընդունման կենտրոն:

*Տես էջ 8*

# «ՍԱՍ գրուպը» պարտատոմսեր թողարկեց

*7 մլն դոլար արժողությամբ եւ 10,1 տոկոս շահութաբերությամբ*




«ՍԱՍ գրուպը» երեկ հանդես եկավ յուրահատուկ առաջարկով՝ թողարկելով արտարժութային պարտատոմսեր: Այդ կապակցությամբ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ «ՍԱՍ» սուպերմարկետների ցանցի տնօրեն **Ստեփան Սահակյանը** տեղեկացրեց, որ նախատեսվում է թողարկել 700 հազար հատ արտարժույթով պարտատոմսեր՝ 7 մլն դոլար ծավալով, 24 ամիս շրջանառությամբ, 10,1 տոկոս տարեկան եկամտաբերությամբ, որը կվճարվի տարին երկու անգամ՝ անվանական արժեքի 5,05 տոկոսի չափով: 1 պարտատոմսի անվանական արժեքն է 10 դոլար: Պարտատոմսերը կթողարկվեն դեկտեմբերի 6-ից մինչեւ 2013-ի հունվարի 10: Վճարումները կատարվելու են 2013-ի հունիսի 6-ին եւ դեկտեմբերի 6-ին, 2014-ի հունիսի 6-ին եւ դեկտեմբերի 6-ին: Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնելու է «Ամերիաբանկը»: Դրանք կշրջանառվեն «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ» ֆոնդային բորսայում:

«Ամերիաբանկի» ներդրումային բանկային գործառնությունների գծով տնօրեն **Առնո Մուսիկյանն** իր հերթին աննախադեպ քայլ համարեց «ՍԱՍ գրուպի» այս քայլը, նշելով, որ պարտատոմսերը մատչելի են յուրաքանչյուր ներդնողի համար: Նրա տեղեկացմամբ՝ պարտատոմսերը կարող են ձեռք բերել նվազագույնը 10 դոլարով, իսկ առավելագույնը՝ 5 մլն դոլարով: «Այս նախաձեռնությունը Հայաստանի կորպորատիվ պարտատոմսերի շուկայում աննախադեպ է, քանի որ թույլատրելու է թողարկել արտարժութային պարտատոմսեր, եւ պատմական է այն առումով, որ հնարավորություն կունենանք արտասահմանից ներգրավելու կապիտալի ներհոսք Հայաստանի կապիտալի շուկա», նշեց **Առնո Մուսիկյանը**, ավելացնելով, որ արդեն կան հետաքրքրվողներ Ռուսաստանից եւ Շվեյցարիայից:

**Ա. Ս.**

**85-ԱՄՅԱԿ**

# Էդուարդ Էլբակյանի ավանդը հայկական մշակույթում



**Հայաստանի վաստակավոր արտիստ, պրոֆեսոր Էդուարդ Էլբակյանը իր 85-ամյակի եւ Հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 90-ամյակի կապակցությամբ օրերս պարգեւատրվեց Հայաստանի վարչապետի շնորհակալագրով:**

**2003 թվականին Էդուարդ Էլբակյանը պարգեւատրվել էր նաեւ հանրապետության նախագահի շնորհակալագրով կրթության ու գիտության բնագավառներում ունեցած վաստակի համար:**

**Էդուարդ Էլբակյանը, որն իր ներդրումն ունի հայ ժողովրդի երգարվեստի զարգացման ու տարածման մեջ, ծնվել է 1927 թվականին Գյումրիում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, այնուհետեւ մասնագիտական կրթությունը ստացել է Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան կոնսերվատորիային կից երաժշտական ուսումնարանում, ապա եւ նույն կոնսերվատորիայում: Ուսումնառությանը զուգահեռ Մոսկվայում աշխատել է ինքնագործ խմբերի հետ եւ մանկական երգչախմբային ստուդիաներում: 1963 թվականից պրոֆեսոր Էլբակյանն ուսումը շարունակել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: Իսկ 1967 թվականից դասախոսում է Մանկավարժական համալսարանի գեղարվեստական դաստիարակության ֆակուլտետի խմբավարության ամբիոնում, 1977-84 թվականներին եղել է նույն ամբիոնի վարիչը: Իր մասնագիտական կարողությունների միջոցով Էդուարդ Էլբակյանն ուսանողներին փոխանցել է այնպիսի գիտելիքներ, որոնց շնորհիվ նրա ուսանողները եւս իրենց մասնագիտության մեջ դարձել են պրոֆեսիոնալներ, մրցույթների դափնեկիրներ, եւ նրանցից շատերը հիմա հաջողությամբ աշխատում են հանրապետության տարբեր քաղաքներում:**

**Մանկավարժական աշխատանքին զուգընթաց Էդուարդ Էլբակյանը ծավալել է նաեւ կատարողական գործունեություն ու մասնակցելով հանրապետական մրցույթների՝ մի քանի անգամ արժանացել է առաջին մրցանակին: Համատեղ աշխատել է նաեւ Հայաստանի երաժշտական ընկերությունում որպես մանկական երգչախմբային ստուդիայի գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր: Նույնիսկ այդ ժամանակ կային դասընթացներ, որոնք Մանկավարժական ինստիտուտի երաժշտամանկավարժական ֆակուլտետի ուսանողներն անցկացնում էին մանկական երգչախմբային ստուդիայում, որտեղից ստեղծագործություններն անմիջական ուղիով փոխանցվում էին Մանկավարժական ինստիտուտ եւ համալրում ուսումնական երգացանկը նոր խմբերգերով: Իսկ 1982-ին, երբ Մոսկվայի Մեծ թատրոնը հյուրախաղերով Երեւանում էր, Էդուարդ Էլբակյանին առաջարկեցին, որ Երաժշտական ընկերության ստուդիայի երգչախումբը մասնակցի Մուսորգսկու «Բորիս Գոդունով» եւ Վերդիի «Դիմակահանդես-պարահանդես» օպերաների ներկայացումներին: Հյուրախաղերի ավարտին Հայաստանի երաժշտական ընկերությունը ստացավ շնորհակալագիր նախկին Խորհրդային Միության մշակույթի նախարարությունից ու Մեծ թատրոնի ղեկավարությունից ներկայացումներին իր գեղարվեստական ու կատարողական բարձր դրսեւորման համար:**

**Է. Էլբակյյանը նաեւ հեղինակել է մի շարք գիտամեթոդական աշխատանքներ, հոդվածներ ու խմբերգային ստեղծագործություններ ու կազմել հայ կոմպոզիտորների խմբերգերի ժողովածուները:**

**1986 թվականին Է. Էլբակյանին շնորհվել է դոցենտի, իսկ 1990-ին՝ պրոֆեսորի գիտական կոչում:**

**Ներկայումս, չնայած իր տարիքին, Էդուարդ Էլբակյանը եռանդուն շարունակում է աշխատել ու դասավանդել Պետական մանկավարժական համալսարանում: Իր հմտությունների, նաեւ ստեղծագործական հաճելի մթնոլորտ ստեղծելու ունակության շնորհիվ ինչպես նախկինում, այնպես էլ այսօր պրոֆեսորը վայելում է կոլեկտիվի եւ ուսանողության սերն ու հարգանքը:**

**Ի. Պ.**

# Մանկավարժականում է Աշոտ Ջազոյանը

Հայկական պետական մանկավարժական համալսարանը հիմնադրման 90-ամյակի շրջանակում շարունակում է հյուրընկալել բուհի բարեկամներին: Այս անգամ համալսարանում էր Լրագրողական միությունների միջազգային կոնֆեդերացիայի գլխավոր քարտուղար, պրոդյուսեր, սցենարիստ, բազմաթիվ հաղորդումների եւ գեղարվեստական ֆիլմերի հեղինակ, ռուսաստանաբնակ **Աշոտ Ջազոյանը**:

Վերջինիս Մանկավարժականի ռեկտոր **Ռուբեն Միրզախանյանը** շնորհեց բուհի 90-ամյակը խորհրդանշող մեդալ: «Աշոտ Ջազոյանը Հայաստանում է «Արարատի ստորոտին» մեդիաֆորումի շրջանակում: Ռուսական հայտնի լրատվամիջոցների ղեկավարներն ու առաջատար լրագրողները վարպետության դասեր են անցկացնում հայ լրագրողների համար: Ես հպարտ եմ, որ Ձեր անմիջական միջամտությամբ նրանք հնարավորություն ունեն ճանաչելու մեր երկիրն ու ժողովրդին»:

Ռուբեն Միրզախանյանը շնորհակալություն հայտնեց Աշոտ Ջազոյանին՝ հեռուստառադիոլրագրության բաժնում օրերս անցկացրած վարպետության դասի համար:

Անվանի մեդիագիտակը նկատեց, որ հիացած է Մանկավարժականի ուսանողների ուսում ստանալու անհագ ձգտմամբ. «Ես պատրաստ եմ համագործակցել բուհի հետ, եւ դրա շրջանակում կարող ենք կազմակերպել առաջատար մասնագետների բաց-դասախոսություններն ու մասնագիտական կուրսերի ուսանողների մեկշաբաթյա պրակտիկան Ռուսաստանում»,- հավելեց Աշոտ Ջազոյանը:

Նա շրջեց համալսարանում, եղավ նորաբաց թանգարանում եւ ցանկություն հայտնեց Տարտուի համալսարանից Մանկավարժական տեղափոխել իր պապի՝ Նիկոլայ Նիկողոսյանի քանդակած Աբովյանի կիսանդրին:

# «Ես շահիդ կին եմ Պանկիսից»

*Ռեպորտաժ Պանկիսի կիրճից*

«Ես շահիդ կին եմ եւ պատրաստ եմ անձս պայթեցնել, որտեղ որ ասեն եւ երբ էլ ասեն», այս խոսքերի հեղինակ երիտասարդ կինը բնակվում է Պանկիսում: Եթե հանձնարարեին՝ նա պատրաստ էր իր անձը պայթեցնել Սահակաշվիլու, Մերաբիշվիլու, Ախալայայի մոտ եւ դրանով վրեժխնդիր լինել Լոպոտի կիրճում քիստ երիտասարդների սպանության համար: Նա չունի ամուսին, երեխաներ եւ երազում է մահվան մասին:

Պանկիսի կիրճում վահաբիզմի հետեւորդների թիվը օրեցօր աճում է՝ 16-30 տարեկան երիտասարդներն ազատ զրուցում են մահվան, դրախտում հանդիպելու, ջիհադի մասին: Արաբերեն լեզուն նախ տեղի մզկիթում են սովորում, այնուհետեւ ուսումը շարունակելու համար նրանց Եգիպտոս են տանում: Այս երիտասարդների համար վահաբիզմը հոգեւորի հետ մեկտեղ կապված է բարեկեցության հետ: Նրանք տեսնում են, որ Պանկիսի վահաբիները չեն աշխատում, սակայն ապրում են բարեկեցիկ, ունեն թանկարժեք մեքենաներ, գեղեցիկ կանայք, ունեն բնակարաններ Թբիլիսիում եւ Թելավում, զավակները սովորում են մայրաքաղաքի պատվաբեր դպրոցներում, գյուղում նրանց հարգում են, միաժամանակ վախենում են նրանցից:

Կիրճում, որտեղ չկան սպորտային մարզադահլիճ, ակումբ, որտեղ արգելված է երաժշտության բարձրաձայն ունկնդրում եւ անգամ նկարչություն, երիտասարդներին պարզապես այլ բան չի մնում: Մզկիթում արաբերեն սովորելու գնում են նաեւ աղջիկները եւ երազում են վահաբիներին կնության գնալու մասին: Երիտասարդ սերնդի կանանց դուր է գալիս եւ հպարտանում են, որ իրենց ամուսինները ջիհադում են:

Պանկիսցի քիստ Ռուսլան Մարգոշվիլին սպանվեց Սիրիայում: Նրա գլխահաս դին հայրենի գյուղ տեղափոխել չկարողացան եւ թաղեցին Թուրքիայում: Սպանվածից մնացին կինն ու երեք անչափահաս երեխաները:

«Նրա կինն ու զավակները մյուսներից լավ կապրեն: Զոհված մոջահեդի ընտանիքին կպահեն ձեռքի ափի մեջ: Կինն էլ երջանիկ կլինի, կամուսնանա այլ տղամարդու հետ»,- ասում է 23-ամյա Ասմաթը, որը շուտով դառնալու է տեղացի վահաբիի կինը:

Զոհված մոջահեդի կնոջ հետ ամուսնանալը եւ նրա որբերին տիրություն անելը հավասարեցվում է ջիհադին: Նման մարդուն մահմեդականները շատ են հարգում: Այդ պատճառով այրի կինը այստեղ միշտ էլ ունի երկրորդ անգամ ամուսնանալու հնարավորություն:

Երիտասարդները թողնում են Պանկիսի կիրճը. նրանք Սիրիայում կռվում են ապստամբների կողմից:

«17-20 տարեկան երեխաներ են, մզկիթ են գնում, ասում են՝ արաբերեն ենք սովորում եւ աղոթում, հետո հանկարծ անհետանում են ընտանիքներից: Հին ավանդույթը խախտվել է, երիտասարդները ծնողներին բանի տեղ չեն դնում, ոչինչ չեն հարցնում, սակայն չէ՞ որ ջիհադ գնացող երիտասարդին մայրը պիտի ճանապարհի, օրհնի, այլապես ջիհադ չի լինի: Նոր կարգ են մտցնում, ոչինչ չեմ հասկանում,- հայտնում է դուիսցի 67-ամյա Թամազը «Գուրիա Նյուսի» հետ զրույցի ժամանակ:

Երկու օր առաջ 20-ամյա Ադլանը գնաց մզկիթ աղոթելու եւ այլեւս չի վերադարձել: Ադլանն ընտանիքի միակ զավակն է, մայրը շատ վշտացավ նրա գնալու համար: Հայրը վահաբի է, եւ ենթադրվում է, որ նա ողջունել է որդու որոշումը: Պանկիսում ասում են, որ ամեն ընտանիքում մեկ վահաբի կա: Դրա համար էլ վահաբիզմի հզորացման մասին ոչ ոք բարձրաձայն չի խոսում, բոլորը խուսափում են սեփական զավակների հետ ընդհարվելուց:

«Իմ տղաներն ապրում են Ավստրիայում՝ փախստականի կարգավիճակով: Ընտանիքներ ունեն, փոքրիկ երեխաներ են մեծացնում: Մեկ շաբաթ առաջ նրանցից մեկը զանգեց, թե Սիրիա եմ գնում՝ կռվելու: Երբ աղաչանք-պաղատանքս չօգնեց, սպառնացի, որ ինքնասպան կլինեմ: Չգիտեմ, չեմ կարծում, որ ինձ լսի,- «Գուրիա Նյուսի» հետ զրույցի ժամանակ ասաց Ձողոլո գյուղի բնակչուհի Լեյլան:

Ավստրիայում եւ Եվրոպայի այն երկրներում, որտեղ չեչեն եւ քիստ փախստականների խիտ բնակչություն կա, կազմակերպվում են Սիրիա մեկնող խմբեր: Ծագումով քիստ փախստականները Սիրիա մեկնելուց առաջ նախ գալիս են Պանկիս եւ այստեղ մնում են մի քանի օր: Հաճախ նրանք այնպես են գյուղը թողնում, որ տարիներով չտեսած ծնողների մոտ էլ չեն գնում:

### Կազմակերպիչներ

Պանկիսում ասում են, որ վահաբիզմի հզորացմանը կիրճում աջակցում էր «Ազգային շարժումը»: Տարիներ շարունակ իշխանությունն այստեղ ընտրություններում հենց վահաբիների օգնությամբ էր հաղթում: Բնակչության մի մասը նրանց հարգում է, իսկ մյուս մասը՝ վախենում է:

Ամենից շատ վահաբիներ ապրում են Դուիսում: Նրանց հավաքատեղին Դուիսի կենտրոնում նորակառույց մզկիթն է: Մզկիթում երեխաներին եւ երիտասարդներին սովորեցնում են արաբերեն: Արաբերեն են սովորեցնում նաեւ ռուսական դպրոցում, որտեղ ուսուցիչ է աշխատում վահաբիների նախկին իմամ խիզիր Բաղակաշվիլին:

Ինչպես պատմում են, վահաբիզմի տարածումով եւ տեղի երիտասարդներին իրենց կողմ քաշելով են զբաղված Մուրադ Քավթարաշվիլին, որը փայտի վերամշակման հիմնարկ ունի Դուիսում, Օմար Մարգոշվիլին, որը մթերային խանութ է աշխատեցնում, ինչպես նաեւ Զելիմխան (Զելո) Խանգոշվիլին, ում անունը վերջերս հնչեց կապված Լափանղուրիի հատուկ գործողության իրականացման հետ: Պանկիսում պատմում են, որ Խանգոշվիլին, ՆԳ նախարարության հակաահաբեկչական կենտրոնի աշխատակից Սանդրո Ամիրիձեն եւ Ախմետայի անվտանգության ղեկավար Էմզար Մաչալիկաշվիլին համակարգում էին Լոպոտայի խմբի հավաքը եւ կիրճ տեղափոխումը: Ինչպես պատմում են պանկիսցիները, առանց Մաչալիկաշվիլու թույլտվության ծիտն էլ չի կարող կիրճ ներթափանցել: Այսօր այս խումբը զբաղված է տեղացի եւ արտասահմանում գտնվող քիստերին Սիրիա ուղարկումով:

Զելիմխան Խանգոշվիլին խմբում առավել փորձված առաջնորդն է: 2008 թվականի մայիսին Զելիմխան Խանգոշվիլուն ռուսական հատուկ ծառայությունները մեղադրեցին անօրինական զինված խումբ ստեղծելու մեջ:

Այն ժամանակ ռուսական հատուկ ծառայությունները պանկիսցի Ռամզան Թուրքոշվիլուն բանտարկեցին եւ մեղադրեցին Վրաստանի օգտին լրտեսության մեջ: «Թուրքոշվիլու հավաքագրումը կատարվեց ՆԳ նախարարության անվտանգության պետ Զուրաբ Օտիաշվիլու եւ ինչ-որ Գիորգիի կողմից: Նրանք կապված էին Պանկիսիում բնակվող Զելիմխան Խանգոշվիլու հետ: Խանգոշվիլին ահաբեկչական այն խմբի ղեկավարն է, որին թաքցնում են Պանկիսում:

2004 թվականի ամռանը Զելիմխան Խանգոշվիլու խումբը ահաբեկչական բազմաթիվ գործողություններ է իրականացրել Ինգուշիայում»,- այս տեղեկությունը 2008 թվականի մայիսին տարածել է Ինտերֆաքս գործակալությունը: Շոթա Ուտիաշվիլին ներքին գործերի նախարարության անունից հայտարարություն արեց եւ հերքեց Ռուսաստանի մեղադրանքը:

Ականատեսների ասելով՝ Զելիմխան Խանգոշվիլուն, Սանդրո Ամիրիձեին եւ Մուրադ Քավթարաշվիլուն վերջին անգամ ընտրություններից 2 օր հետո տեսել են Օմալոյում: «Ազգային շարժում»-ի պարտությունից հետո նրանք հեռացան կիրճից եւ մի քանի երիտասարդների հետ մեկնեցին Սիրիա:

«Ընտրություններից հետո մոտ տասը տղաներ են տեղափոխել Սիրիա: Մեծ մասը Մուրադ Քավթարաշվիլու փայտի վերամշակման հիմնարկում էր աշխատում: Հենց Մուրադն է տղաներին հավաքագրում: Մահմեդական տարբեր կազմակերպություններից խոշոր գումարներ են գալիս կիրճ: Գումարը կիսում են վահաբիներն ու իրավապահները: Մեր զավակների հաշվին հարստանում են, իսկ տղաներին առաջարկում են միայն դուրս ընկնելը,- ասում է դուիսեցի մի բնակիչ «Գուրիա Նյուսի» հետ զրուցելիս:

Տեղացիներն ասում են, որ վերջերս նկատել են Պանկիսում Լոպոտի կիրճից տեղափոխված լեկերի: Կիրճում աճել է այսպես կոչված արաբ զբոսաշրջիկների թիվը, որոնք տուրիստներին ոչ հատուկ հաճախականությամբ գնում են մզկիթ եւ հանդիպում տեղի իմամին: Պանկիսցիների ասելով՝ տարբեր երկրներից եկած վահաբիներն երբեմն քողարկվում են «արաբ գործարարների» անվան տակ եւ բնակվում են «Ազգային շարժման» կողմնակիցների ընտանիքներում:

«Կիրճում իսկայական գումարներ էին պտտվում: Այստեղ ներբերված երեք միլիոնի երկու միլիոնից ավելին անվտանգության ծառայությունն էր տանում: Իմիջիայլոց, Լոպոտի կիրճում մեր տղաները փողերը պարկերով էին տանում: Երբ կռահեցին, որ մատնություն է տեղի ունեցել եւ շրջապատված են, պարկերը կրակի տվեցին, թե ինչու պիտի փողը մնա նրանց: Անվտանգությունը գիտեր փողի մասին, հենց որ ծուխը տեսան, հասկացան, թե ինչ է կատարվում, եւ անմիջապես սկսեցին տղաներին ռմբակոծել: Մի քանի պարկ փրկվեց այրվելուց, եւ այդ դրամը մնաց վրաց իրավապահներին»,- ասում է Բահաուդինը «Գուրիա Նյուսի» հետ զրույցի ժամանակ:

Պանկիսցիները կարծում են, որ Սիրիա գնացող տղաների հավաքագրումը գումարի խոստումով չի կատարվում: «Նրանք փոքր տղաներ են, մեկ-երկու անգամ մեքենա են տալիս վարելու, հետո հեռախոսի հաշիվն են լիցքավորում, կարող է ոչխար էլ մորթեն եւ խնջույք կազմակերպեն: Այս երեխաների ուղեղներն այնպես են շրջված, որ էլ ոչինչ չեն ուզում, արդեն այդպես էլ կռիվ կգնան եւ կզոհվեն ուրախությամբ: Չգիտեմ՝ չիպեր են դնում ուղեղի մեջ, թե էլ ինչպես են այդ հաջողեցնում: Ոչինչ այլեւս չի հետաքրքրում մեր երիտասարդներին, ո՛չ երաժշտություն, ո՛չ զվարճանք, ո՛չ խմիչք են օգտագործում, ո՛չ էլ ծխում, եւ շրջում են մորուք թողած,- ասում է վահաբի տղաներից մեկի հայրը:

Ինչպես «Գուրիա Նյուսին» հայտնի դարձավ, Սիրիա միայն պանկիսցի վահաբիները չեն գնում: Խմբեր են կազմակերպվում նաեւ Աջարիայում եւ Գուրիայում, որտեղ նույնպես բնակվում են վահաբիզմի հետեւորդ ընտանիքներ: Նրանցից ոմանք թողեցին Գուրիան եւ տեղափոխվեցին բնակության Պանկիսում: Ինչպես պատմում են տեղացիները, Դուիսիում է բնակվում Օզուրգեթից տեղափոխված Վաշակմաձեների ընտանիքը՝ մայրը երեք զավակի հետ: Ամուսինը պայթեցվել է Չեչնիայում, իսկ վահաբի մայրը երեխաներին մահմեդական կարգով դաստիարակելու համար գերադասել է Պանկիսը: Ութերորդ դասարանցի նրա դուստրը իր հասակակիցների նման դպրոց է գնում կրկնակի գլխաշորով եւ ոտնաթաթերին հասնող շրջազգեստով, ինչի հնարավորություն Օզուրգեթում նա չէր ունենա:

Պանկիսի երեք գյուղերից մոտ 20-30 երիտասարդ է գնացել Սիրիա ՝ Ասլան Դ.-ն Սիրիա գնալուց առաջ աշխատում էր Մուրադ Քավթարաշվիլու փայտի վերամշակման արտադրամասում: Ռամազ Խ.՝ Պետրե Ցիսկարիշվիլու միջամտությամբ հինգ այլ երիտասարդների հետ ժամկետից շուտ ազատվել է բանտից: Նա էլ ուրիշների նման 50 ձայն պիտի ապահովեր ազգայնականների օգտին: Ինչպես ասում են Դուիսում՝ ընտրություններից հետո Ռամազը գնաց Սիրիա կռվելու:

Օրերս Սիրիայից 10-հոգանոց խումբ էր վերադարձել Պանկիս: Արբին պատմում է, որ Սիրիայում անհրաժեշտ քանակության զենք չգտնվեց, եւ խումբը հետ ուղարկեցին դժգոհելով՝ «ձեր զենքով պիտի եկած լինեիք»: Մի քանի օրից նրանք մտադիր են հետ գնալ:

Մեր տեղեկության համաձայն՝ պանկիսցի երիտասարդներին Թուրքիա ավտոբուսներով են տեղափոխում: Այնտեղ նրանց դիմավորում է մեկ այլ խումբ, որը պատասխանատու է կռվողներին Սիրիա տեղափոխելու համար:

Ընտանիքներից անհետացած տղաները զանգում են տուն եւ ծնողներին հավաստիացնում, թե Թուրքիա են գնացել աշխատելու:

Պանկիսիում տիրող իրավիճակի գնահատման համար «Գուրիա Նյուսը» խնդրեց Կովկասի ժողովուրդների կոնֆեդերացիայի նախագահ Զաալ Կասրելիշվիլուն: Կասրելիշվիլին հայտարարում է, որ կրոնական հակամարտությունների տեսքով երկրին լուրջ վտանգ է սպառնում:

«Պանկիսի կիրճում այնքան երիտասարդ չի բնակվում, որ կիրճից նրանց արտահոսքը աղետալի երեւույթ լինի: Սա բավականին անձնական խնդիր է. վահաբի է եւ գնում է, ի՞նչ անել՝ բռնե՞լ, կրո՞նն արգելել, ճնշո՞ւմ գործադրել, թե ի՞նչ կարող ես անել:

Կասրելիշվիլին կարծում է, որ Պանկիսի եւ ընդհանրապես կրոնական ու էթնիկական փոքրամասնությունների նկատմամբ անհրաժեշտ է փոխել պետական քաղաքականությունը: Նրա կարծիքով՝ որքան շատ երիտասարդ գործի անցնի մեր երկրում եւ որքան շատ մարդ ունենա եկամտի անկախ աղբյուր, այնքան ավելի դրսից կռվողներ որսացողների համար կդժվարանա երիտասարդների հավաքագրումը:

«Ենթատեքստն այն է, որ նրանք վարձու կռվողներ են, որոնց լավ են վարձատրում: Տնտեսական բարեկեցության հետ մեկտեղ նրանք իրենց արարքը հիմնավորում են նրանով, որ ծառայում են Աստծուն: Այդ պատճառով էլ, կարծում եմ, չափազանց դժվար է կասեցնել այդ գործընթացը: Ժամանակին նախ Շեւարդնաձեի եւ այնուհետեւ Սաակաշվիլու իշխանությունները պետք է մտածեին այս խնդիրների մասին, լավ կլիներ հզորացնեին հատուկ ծառայությունները եւ ներս չթողնեին այսպես կոչված «պակուպատելներին», որոնք փողով եւ հրապուրիչ պատմություններով գժվեցնում են երիտասարդներին: Երիտասարդներին հրապուրում են փողը, արկածները, աստծուն ծառայելը,- ասում է Զաալ Կասրելիշվիլին «Գուրիա Նյուսի» հետ զրույցում:

Կասրելիշվիլին կարծում է, որ այս գործընթացը գլոբալ քաղաքականության մասնիկն է, քանի որ Սիրիայում պայքարն ընթանում է Ասադի ռեժիմի դեմ եւ սալաֆիներին կամ վահաբիներին օգտագործում են նրանց դեմ:

Նրա ասելով՝ գործընթացի ավարտից անմիջապես հետո վահաբիներին կհեռացնեն, թեեւ ոչ ոք չգիտի, թե դա ե՞րբ կլինի եւ այդ ընթացքում ի՞նչ վտանգ է սպառնում մեր երկրին: Ոչ ոք չգիտի՝ մոտակա 2 տարվա հեռանկարով եմ ասում, լա՛վ հիշեցեք իմ ասածը, չափազանց ծանր պատկեր է, շատ վահաբիներ են Վրաստանի տարածքում բնակվող ադրբեջանցիների մեջ, նմանապես՝ շատերն են ապրում Թբիլիսիում եւ նրա շուրջը: Ողղակի, նրանք ավելի լավ են քողարկված-դիմակավորված: Պանկիսցիներն ազնիվ են եւ չեն թաքցնում: Սալաֆիներից բացի՝ Վրաստանում 200 հազարից ավելի շիա է բնակվում: Նրանց անմիջականորեն ղեկավարվում են Իրանի շիական կազմակերպությունների կողմից: Հենց որ Իրանում բարդանա իրավիճակն, իսկ դա տեղի կունենա 2013 թվականին, Վրաստանը շատ ծանր իրականության առջեւ կհայտնվի: Գուցե դա նրանց գլխում չծագի, բայց շեյխերից՝ դրսից որ հրաման գա, կմասնակցեն ահաբեկչությանը, եւ ինչ ուղղությամբ թելադրեն, կպայքարեն այդ ուղղությամբ:

- Այդ պատճառով էլ, խնդրում եմ, կոչ արեք ձեր գործընկերներին, որ ուշադրություն դարձնեն այս թեմաներին, այլապես դժբախտությունը դռան մոտ է կանգնած: Դժբախտությունը դուռ թակել չգիտի, անմիջապես ներխուժում է ընտանիք, - ասում է Կովկասի ժողովուրդների կոնֆեդերացիայի նախագահը:

ԷԿԱ ԱԼՓԱԻՁԵ

http://www.gurianews.com/index.php?option=com–content&view=article&id=6223

*Վրացերենից թարգմանեց*
*ՌՈՒԶԱՆՆԱ ՅՈԼՉՅԱՆԸ*

ԱԶԳ **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ**

# Դիտորդ պետության կարգավիճակը Պաղեստինի առջեւ բացում է ՄԱԿ-ին անդամակցելու հեռանկարը

*1-ին էջից*

Այլ կերպ, Աբբասին ուղղորդեցին ոչ թե պաշտոնական Վաշինգտոնը, այլ՝ պաղեստինյան կազմակերպությունները, իսկ դա խոսում է ամերիկյանի համեմատ այս կազմակերպությունների ճնշումների արդյունավետության մասին: Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում անցկացված քվեարկության արդյունքներին, որի ընթացքում ձեռնպահ մնաց 41 երկիր, ապա դրանք էլ դարձան քաղաքական առաջադրանքի կատարումը դիվանագիտական ճնշումներով ապահովելու ԱՄՆ-ի անզորության վկայությունը:

Կասկածից վեր է, որ ՄԱԿ-ում Պաղեստինի դիտորդ պետության կարգավիճակին կտրականապես հակադրվող ԱՄՆ-ն, դիվանագիտական ձեռնարկումներից զատ քաղաքական ճնշում է գործադրել մյուս երկրների վրա: Չնայած տնտեսական, քաղաքական եւ ռազմական կախվածությունից, ամերիկյան ճնշումներին ընդամենը ենթարկվել է 9 երկիր, 138-ը՝ հակադրվել, իսկ 41-ը՝ ի լուր աշխարհի ակնհայտորեն չհակադրվելու համար նախընտրել է մնալ ձեռնպահ:

ՄԱԿ-ի անդամ երկրների վրա գործադրված ճնշումները, ինչ խոսք, ինքնանպատակ չեն, այլ պայմանավորված են դիտորդ պետության կարգավիճակի Պաղեստինին ընձեռած առավելություններով: Որո՞նք են դրանք: Մինչ հարցին պատասխանելը նշենք, որ նոյեմբերի լույս 30-ի գիշերն անցկացված քվեարկությամբ Վատիկանից հետո Պաղեստինը դարձավ ՄԱԿ-ում դիտորդ պետության կարգավիճակ ունեցող երկրորդ պետությունը:

Ժամանակին դիտորդ պետության կարգավիճակ են ունեցել Ավստրիան, Ֆինլանդիան, Իտալիան, Ճապոնիան, որոնք այնուհետեւ ընտրվել են ՄԱԿ-ի լիարժեք անդամ: Ավելին, 2002-ին ՄԱԿ-ին անդամակցած Շվեյցարիան դիտորդ պետության կարգավիճակը պահպանել է շուրջ 50 տարի:

Այլ կերպ, դիտորդ պետության կարգավիճակը Պաղեստինի առջեւ բացում է ՄԱԿ-ի լիարժեք անդամ դառնալու հեռանկարներ, տալով նրան անդամակցության դիմում ներկայացնելու հնարավորություն: Նոր կարգավիճակով Պաղեստինը ստանում է նաեւ ՄԱԿ-ի առընթեր գործող կառույցներին դիմելու իրավունք:

Այդ կառույցներից թերեւս ամենակարեւորը Հաագայի միջազգային քրեական դատարանն է, որի վարույթում են պատերազմի եւ ցեղասպանության հանցանքներին, կոտորածներին եւ օկուպացված տարածքներին առնչվող գործեր: Այս ամենը նշանակում է, որ դիտորդ պետության կարգավիճակով Պաղեստինը ոչ միայն անդամակցության դիմում կներկայացնի ՄԱԿ-ին, այլեւ օկուպացված տարածքների եւ Պաղեստինի խաղաղ բնակչության դեմ հանցագործություն իրականացնելու մեղադրանքով կդիմի Հաագայի միջազգային դատարան, որ պատասխանատվության ենթարկի Իսրայելին:

Եթե նույնիսկ այդ դիմումը նպատակին չծառայի, Պաղեստինը դրանով կսահմանափակի պաղեստինցիների դեմ պատժիչ գործողություններ իրականացնելու, պաղեստինյան բնակավայրերն ավերելու եւ Գազայի հատվածը ցամաքից, օդից, ծովից դաժան շրջափակման ենթարկելու Իսրայելի ոտնձգությունները:

# Իսրայելը վերականգնում է լրտեսական ինքնաթիռների մատակարարումը Թուրքիային

«Հաարեց» իսրայելական պարբերականից արտատպելով լուրը՝ «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթը տեղեկացնում է, որ Իսրայելի ավիաարդյունաբերության «Էլտա» մասնաճյուղը համաձայնել է վերականգնել Թուրքիայի համար հետախուզական ինքնաթիռներ մատակարարելու ծրագիրը: Սա նշանակում է, որ «Մավի Մարմարայի» միջադեպից հետո (2010, մայիս) վատթարացած հարաբերությունները Թուրքիայի հետ հարթեցվում են ելնելով քաղաքական նոր իրավիճակներից:

Ըստ «Հուրիեթի» հաղորդագրության՝ ծրագիրը նախատեսում է ավարտել չորս «Բոինգ 737 AWACS» տիպի ինքնաթիռների արտադրությունը, որ երկար ժամանակ ընդհատվել էր: Ծրագրի (որը պետք է հաստատվի Իսրայելի պաշտպանության նախարարության կողմից) ընդհանուր արժեքն է 1,6 միլիարդ դոլար:

Այդ ինքնաթիռները Թուրքիան պատվիրել էր «Բոինգ» ընկերությանը դեռ 2002 թվին, եւ «Էլտան» պատրաստվել էր դրանք մատակարարել 2006-ին, բայց դրանցում նախազգուշական եւ վերահսկողության համակարգերի տեղադրումը ավելի երկար ժամանակ էր պահանջել, եւ միայն երկու ինքնաթիռ էր հանձնվել Թուրքիային նախքան հարաբերությունների վատթարացումը, որի հետեւանքով Իսրայելի պաշտպանության նախարարությունը արգելել է ինքնաթիռների արտահանումը Թուրքիա:

Ծրագրի վերականգնումը իրականություն է դարձել «Բոինգի» ջանքերով: Հատուկ սարքերով հագեցած այդ ինքնաթիռներն ի վիճակի են ոչ միայն «որսալ» երկար հեռավորությունների վրա գտնվող այլ ինքնաթիռներ, նավեր եւ շարժական մեքենաներ, այլեւ «տարբերակել» հազարավոր կիլոմետր հեռավորությունից, թե այդ ինքնաթիռներն ու նավերը բարեկամակա՞ն են, թե՞ թշնամական՝ ըստ այդմ գործողություններ իրականացնելու համար:

Հ. Ծ.

# Ստրոս-Կանը եւ Դիալլոն համաձայնության են եկել





Արժույթի միջազգային հիմնադրամի նախկին կարգադրիչ տնօրեն Դոմինիկ Ստրոս-Կանը համաձայնության է եկել իրեն սեռական ոտնձգության մեջ ամբաստանած նյույորքյան Sofitel հյուրանոցի սպասավորուհի Նաֆիսսատու Դիալլոյի հետ: Այդ մասին հաղորդում է «Նյու Յորք թայմս» թերթը, վկայակոչելով լավատեղյակ աղբյուրներ: Համաձայնության մանրամասնությունները առայժմ չեն հրապարակվում, բայց հայտնի է, որ Ստրոս-Կանը հավանաբար որոշակի գումար է տալու Դիալլոյին: Թերթի տվյալներով, խոսքը նախնական համաձայնության մասին է, որի մանրամասնությունները դատարանում կներկայացվեն եկող շաբաթ:

Այս տարվա մայիսին Ստրոս-Կանը Դիալլոյին ներկայացրել էր 1 մլն դոլարի հակընդդեմ հայց՝ սպասավորուհուն մեղադրելով այն բանում, որ նրա ստահոդ մեղադրանքների պատճառով ինքը կորցրել է պաշտոնը եւ բարի համբավը: Ստրոս-Կանի կարծիքով, իր դեմ ուղղված գործը թխել են Ֆրանսիայի նախկին նախագահ Նիկոլա Սարկոզիի վարչակազմի ցուցումով:

**ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐԻ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ**

# Եգիպտոսն ընդունեց սահմանադրության նոր նախագիծը



Եգիպտոսի սահմանադրական ժողովը ընդունել է երկրի նոր սահմանադրության նախագիծը, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Նախագիծը երեկ ներկայացվել է նախագահ Մուհամմեդ Մուրսիին: Եթե Մուրսին հավանություն տա դրան, ապա Եգիպտոսում տեղի կունենա սահմանադրության ընդունման հանրաքվե:

Նոր սահմանադրությունը պարունակում է 234 հոդված: Դրանց հիմքում ընկած է 1971 թ. սահմանադրությունը:

Նոր նախագծի համաձայն, Եգիպտոսի նախագահը կընտրվի երկու անգամից ոչ ավելի, չորսամյա ժամկետով: Պատերազմ հայտարարելու դեպքում պետության ղեկավարը պետք է ստանա ինչպես խորհրդարանի, այնպես էլ պաշտպանության ազգային խորհրդի հավանությունը:

Բացի դրանից, փաստաթղթում անփոփոխ է մնում Հոսնի Մուբարաքի օրոք ձեւակերպված այն դրույթը, որ շարիաթի նորմերը մնում են Եգիպտոսի օրենսդրության հիմքում:

Վերջին մեկ շաբաթվա ընթացքում երկրում տեղի են ունենում բողոքի ցույցեր ընդդեմ Մուրսիի լիազորությունների ընդլայնման: Մի շարք հրամանագրերի ընդունումից հետո նախագահը փաստորեն ձեռք բերեց անսահմանափակ իշխանություն: Նրա բոլոր հրամանագրերն ու կարգադրությունները վիճարկման ենթակա չեն: Ի պատասխան՝ բազմահազարանոց ցույցեր անցկացվեցին Կահիրեում եւ այլ քաղաքներում: Տեղի ունեցան նախագահի կողմնակիցների եւ հակառակորդների բախումներ: Վիրավորների թիվն անցնում է 500-ից: Նման պայմաններում Մուրսին խոստացավ, որ իշխանությունների իրական բաժանումը տեղի կունենա սահմանադրության ընդունումից հետո:

«Մուսուլման եղբայրներ» իսլամիստական շարժման ներկայացուցիչ Մուրսին Եգիպտոսում նախագահ ընտրվեց 2012-ի հունիսին: Դրանք երկրում նախագահական առաջին ընտրություններն էին վերջին ավելի քան 30 տարում:

# Նոր ձկնատեսակ՝ Օբամայի անունով



ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման, որն արդեն պատմության մեջ է մտել որպես Սպիտակ տունը տեղ զբաղեցրած առաջին աֆրոամերիկացի, ինչպես նաեւ խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր, օրերս արժանացել է մեկ ուրիշ պատվի: Կենդանաբանները նրա անունով են կոչել քաղցրահամ ջրերի մանր ձկների մի նորահայտ տեսակ: Այդ մասին հաղորդում է բրիտանական «Գարդիան» թերթը: Նախաձեռնությունը պատկանում է կենդանաբաններ Սթիվ Լեյմենին (Ջորջիայի Geosyntec Consultants հաստատություն) եւ Ռիկ Մեյդենին (Սենթ Լուիսի համալսարան):

Նրանց հայտնաբերած նոր ձկնատեսակը անվանակոչվել է Etheostoma obama: Դա փոքր, «բավական նիհար» ձկնիկ է, գրում է «Գարդիանը»: Արուների երկարությունը սովորաբար չի անցնում 5 սմ-ից: Թեփուկներն ունեն նարնջակապտավուն խայտաբղետ գունավորում, իսկ մեջքի վրա կա հովհարաձեւ լողաթեւ՝ վառ գույնի շերտերով: Այդ ձկնատեսակի ներկայացուցիչների մեծամասնությունը անատամ է. միայն 29 տոկոսն ունի քիմքային ատամներ:

Սա առաջին դեպքը չէ, երբ ձկներն անվանակոչվում են ամերիկյան նախագահի անունով: Ավելի վաղ, համանման պատվի արդեն արժանացել էին ԱՄՆ-ի նախագահներ Բիլ Քլինթոնը, Ջիմի Քարտերը եւ Թեոդոր Ռուզվելտը: Ի դեպ, Ռուզվելտից բացի, նրանք բոլորը դեմոկրատներ էին, ինչպես եւ Օբաման:

# Մշակույթ

ՄՈՆՐԵԱԼ

## Սիրիլի համերգը` ի նպաստ «Ապագայ» շաբաթաթերթի



Անցյալ հոկտեմբերի 20-ին Մոնրեալի (Կանադա) «Կլոդ Շամպայն» համերգասրահում տեղի է ունեցել ստամբուլահայ երգչուհի Սիրիլի համերգը` ի նպաստ «Ապագայ» ազգային, մշակութային եւ հասարակական շաբաթաթերթի` նվագախմբի ղեկավարությամբ երգահան Մաժակ Թոշիկյանի, ընկերակցությամբ դաշնակահար Պուրակ Պեշիկյանի եւ մասնակցությամբ «Գառնի» պարախմբի:

«Կարծեմ լաւագոյնն է ըսել, որ մէկը միւսին լրացնելով, բոլորն ալ հաւասարապէս իրենց տաղանդը ցոյց տուին», գրում է այդ առթիվ տիկին Քրիստինե Տրդատյան-Գույումճյանը շաբաթաթերթի նոյեմբերի 5-ի համարում:

Սիրիլը ներկայացրել է հմուտ երգչուհու վարպետությամբ «Նամակը» (խոսք Հ. Շիրազի, երաժշտությունը` Թոշիկյանի), «Կիլիկիան», «Ամպեց կորավը», «Բարի արագիլը» եւ այլ երգեր իր անուշ ձայնով:

Պոլսից հրավիրված դաշնակահար Պուրակ Պեշիկյանը ցույց է տվել «մատնաշարին իր զգայուն հպումը, երգին պատկերացուցած կարօտը, ցաւն ու գեղեցկութիւնը»:

Իսկ «Գառնի» պարախումբը խանդավառել է ներկաներին իր խորապես ազգային պարատեսակներով:

Նախորդ օրը «Ապագայի» 37-րդ տարեդարձի առթիվ ԹՄՄ-ի կենտրոնում տեղի է ունեցել ընկերական ջերմ հանդիպում Սիրիլի, Մաժակի, Պուրակի եւ Նյու Յորքից ու Տորոնտոյից ժամանած հյուրերի ու վարչականների հետ: Բարի գալուստի խոսքերով հանդես են եկել ԹՄՄ-ի վարչության ատենապետ Արթո Մանուկյանն ու միության նախագահ դոկտ. Արշավիր Գյունճյանը: Ելույթ է ունեցել նաեւ Նյու Յորքից Istanbul Armenia Relief Society-ի խմբի կողմից Պերճ Արազը: Վերջում Սիրիլը խոսել է հայ երգի ու երաժշտության հանդեպ ունեցած իր սիրո մասին:

Հ. Ծ.

## Ավանդույթը` հեռավոր մի մեղեդի

Այս խորագրի ներքո իսրայելական «Հաարեց» թերթը մի ամբողջ էջ է նվիրել Արամ Ղարաբեկյանի եւ Աննա Մայիլյանի կատարողական արվեստին, գտնելով, որ հմայիչ ու հիպնոսացնող է այն:

«Ինչպե՞ս կարելի է 21-րդ դարում դահլիճ բերել միջինից ցածր տարիքի երիտասարդներին» հարցին հոդվածի սկզբում լրագրող **Նոամ Բեն Զեեւը** պատասխանում է, որ գաղտնիքը «երաժշտության բովանդակության, ճաշակի եւ երեւակայության մեջ է, նաեւ երգացանկի ճիշտ ընտրության»:

Խմբավար Արամ Ղարաբեկյանի ղեկավարությամբ Երուսաղեմի իսրայելական կամերային նվագախմբի «Կովկասի եւ Արարատի միջեւ» հիպնոսացնող կատարումը ապացուցում է, որ համերգը դեռեւս մնում է դասական երաժշտության գլխավոր նվաճումը, գրում է նա:

Անցյալ տարի նվագախումբը Ջոզեֆ Բարդանաշվիլիի ղեկավարությամբ համերգներով հանդես է եկել Վրաստանում եւ Հայաստանում, եւ այդ ժամանակ էլ ծրագրվել է ներկա համերգը: Ներկայացվել են Ալեքսանդր Հարությունյանի, Էդուարդ Միրզոյանի, Տիգրան Մանսուրյանի եւ անշուշտ Մեծն Կոմիտասի ստեղծագործությունները:

«Երկուուկես ժամ տեւած համերգը, որը սովորականից մի փոքր ավելի երկար է, մեծ հաճույք պատճառեց: Բեմի կենտրոնում կանգնած էին ապշեցուցիչ երկու երաժիշտներ` խմբավար Արամ Ղարաբեկյանը, ծնված Թեհրանում, որը Հայաստան է վերադարձել երկրի անկախություն ձեռք բերելուց հետո, եւ որը ձեռքի եւ մարմնի շարժումների թեթեւ, նուրբ, բայց նաեւ ճշգրիտ համադրումով օժտված առաջնակարգ երաժիշտ է, եւ նրա կողքին` Երեւանի Կոմիտասի անվան երաժշտանոցի վոկալի պրոֆեսոր, մեցոսոպրանո Աննա Մայիլյանը, որ հրեշտակի նման երգեց եւ անսահման թովչանք պարգեւեց», խոստովանում է լրագրողը, հատկապես շեշտելով երգացանկից դուրս, որպես «encore» նրա անթերի արտասանությամբ կատարած «Eli, Eli» եբրայերեն հայտնի երգը:

«Կովկասի եւ Արարատի միջեւ» համերգը գերազանց դաս էր երաժշտական մշակույթի առումով, եզրակացնում է «Հաարեցի» հոդվածագիրը:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

## Վերադարձ արմատներին

Երիտասարդ երգիչներ Սիրանուշ Գալստյանը, Մուրադ Մշեցին եւ Կարեն Մշեցին, որոնք ամենայն պատասխանատվությամբ ու ճշգրտությամբ ներկայացնում են մեր ժողովրդական, աշուղական, հայրենասիրական երգերը, դեկտեմբերի 2-ին հանդես կգան նոր համերգով:

Արամ Խաչատրյան համերգասրահում կայանալիք «Արծիվ, սլացիր» խորագիրը կրող յուրօրինակ համերգն հնարավորություն կտա «եւս մեկ անգամ երգի թեւով ճախրել մեր կարոտ էգրով, մեր կորած էգրով, մեր գտած էգրով» նշում էին հայ երգի այս մեկնաբանները: Նման համերգները առավել եւս այս օրերին ավելի մեծ դեր կարող են խաղալ` գուցե դաշտից դուրս մղելով օտարահնչյուն ելեւէջները, կլկլացող 6-8 տաղաչափով տարածված խառնիշփոթ երգերն ու երգիչներին:

Մ. Մ.

## «Ջազի սրբազան հրեշը»

*«Ջազի սրբազան հրեշ» մականունը կրող Ռիշար Գալիանոն, որի երեւանյան առաջին համերգը տեղի կունենա այսօր, ծնվել է 1950-ին հայտնի ակորդեոնահար Լուսիեն Գալիանոյի ընտանիքում եւ, ինչպես Ռիշար Գալիանոն է ասում, նա հոր օրինակով է ընտրել այդ գործիքը: Նիցցայի կոնսերվատորիայում ուսանել է ակորդեոն, հարմոնիա եւ տրոմբոն: 3 տարի նա որպես դիրիժոր եւ կոմպոզիտոր հանդես է եկել իր իսկ հիմնած խմբում: Գալիանոն մի շարք CD-ներ է ձայնագրել հայտնի ֆրանսիացի երաժիշտներ Բարբարայի, Սերժ Ռեգիանի, Շառլ Ազնավուրի եւ Ջուլիետ Գրեկոյի հետ: Ելույթ է ունեցել ջազային երաժիշտներ` Չեթ Բեքերի, Սթիվ Փոթսի, Ջիմմի Գոռլիի, Թութս Թիլեմանսի հետ: Թավջութակահար Ժան Շառլ Կապոնի հետ ձայնագրել է իր առաջին սկավառակը, իսկ Ռոն Քարտերի հետ համատեղ` 1990-ական թվականներին թողարկել է իր առաջին ալբոմը: Ֆրանսիայում Ռիշար Գալիանոն հիմնադրում է Festival des Nuits de Nacre փառատոնը, որի գեղ. ղեկավարն էր մինչեւ 1992թ.-ը:*

*Հանդիպումը Աստոր Պիացոլլայի հետ վերադարձնում է Գալիանոյին իր արմատներին եւ ավանդական Valses-Musette-ի, Javas-ի, Complaintes-ի and Tangos-ի երգանցանկին, որը երկար ժամանակ չէր ընդունում: Ոգեշնչվելով Գաս Վիսուրից եւ Տոնի Մուրենայից, նա ձերբազատվում է ակորդեոնի մասին կարծրատիպերից եւ ներկայացնում ամբողջապես նոր ռիթմիկ կոնցեպտ եւ ջազին առավել մոտ հարմոնիկ ոճ: Իր նոր մոտեցումը նա արտահայտում է Ալդո Ռոմանոյի, Պիեռ Միշելոտի եւ Ֆիլիպ Կատերի հետ ձայնագրած New Musette CD-ում, որի համար 1993թ.-ին արժանանում է «Տարվա ֆրանսիացի երաժիշտ» մրցանակին Academie du Jazz's Django Reinhardt Prize-ում: Իսկ նրա Gallianissimo ալբոմը, ճանաչվում է բոլոր տարիների Dreyfus Jazz ալբոմ: 1996-ին Ջորջ Մրազի, Էլ Ֆոսթերի եւ Բիրելի Լագրենի հետ ձայնագրել է «New York Tango» ձայնասկավառակը, որի համար ստացել է «Victoire de la Musique» մրցանակը:*

*Հայր եւ որդի Գալիանոների մշակած ակորդեոնի ուսումնական մեթոդը 2009թ.-ին ստացել է SACEM մրցանակը` որպես լավագույն կրթական գործ: Արդեն դասական համարվող Գալիանոյի տեսաձայնագրությունների հիման վրա ստեղծվել են 100-ավոր տեսադասընթացներ: 2010թ.-ից Գալիանոն էքսկլյուզիվ պայմանագիր ունի Deutsche Grammophon (Universal)-ի հետ, որի համար արված նրա առաջին` Յո. Ս. Բախին նվիրված սկավառակը դարձավ տարվա լավագույն դասական սկավառակը եւ վաճառվեց 40.000 օրինակով:*



**- Պրն Գալիանո, Ձեզ հետ ստեղծագործական կատարողական համագործակցություն են ունեցել երաժշտական տարբեր ժանրեր եւ ուղղություններ ներկայացնող աշխարհահռչակ բազմաթիվ երաժիշտներ, այնուամենայնիվ ի՞նչ տեղ է գրավում Ձեր ստեղծագործություններում ֆոլկ երաժշտությունը:**

- Ֆոլկ երաժշտությունը շատ առանձնահատուկ տեղ է գրավում, ինչպես ակորդեոնը, որը պատկանում է բոլոր երկրներին: Ես հորինել եմ երեւակայական ֆոլկլոր իմ «Կոնցերտո» ստեղծագործության մեջ` ներշնչվելով և՛ ֆրանսիական, և՛ արգենտինական ոճի երաժշտությունից: Վստահ եմ, որ այս ստեղծագործությունը հայաստանյան համերգին հետաքրքրական կստացվի` Ֆրանսիայում ճանաչված Վահան Մարտիրոսյանի գլխավորությամբ, որն ինձ համար շատ լավ երաժիշտ եւ ղեկավար է:

**- Ձեր տպավորությունները շանսոնի մեծ վարպետ Շառլ Ազնավուրի հետ համագործակցությունից:**

- Շառլ Ազնավուրի մի շարք ձայնագրություններին եմ մասնակցել, որտեղ նվագել եմ ակորդեոն, բանդոլեոն: Ազնավուրը շատ հայտնի մի երգ ունի` «Ապրել քեզ հետ», որի գործիքավորումը երբ անում էի, նրա հետ ավելի մտերիմ համագործակցություն ունեցա: Ազնավուրի հետ մոտիկից շփվելով հասկացա, որ նա մեծ երգիչ լինելուց բացի պրոֆեսիոնալ մակարդակի երաժիշտ է նաեւ:

**- Ձեր ստեղծագործական կենսագրության պայծառ էջերից է Բախին նվիրված սկավառակը, դուք պատրաստվո՞ւմ եք նորից անդրադառնալ այլ դասականներին եւս:**

- Մյուսը Վիվալդին է լինելու, որը հաջորդ գարուն է լույս տեսնելու Deutsche Grammophon-ի կողմից: Ջազից անցումը Վիվալդիին ինձ մեծ ազատություն է տալիս: Ըստ իս, արդյունքը հետաքրքրական է ստացվել:

**- Ո՞րն է որպես երաժիշտ Ձեր յուրօրինակությունը:**

- Իմ գլխավոր յուրօրինակությունը միջերկրածովյան ֆոլկ երաժշտության ինտեգրումն է ջազին: Ինչպես Աստոր Պիացոլլան էր նշում, երաժիշտը պետք է նվագի իր ժողովրդի երաժշտությունը, որը մի փոքր ազգային մոտեցում է: Ես ծնվել եմ Կաննում եւ ծովի ռիթմը ինձ ոգեշնչում է, ահա թե ինչու ես շատ մոտ եմ լատինական երաժշտությանը: Նույնիսկ տանգո նվագելու իմ մոտեցումը միջերկրականյան է, ոչ թե արգենտինական: Իմ նվագած երաժշտության մեջ միշտ կա ծովի շարժումը, որն ինձ համար շատ կարեւոր է:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Արգենտինյան ֆիլմերի փառատոն Երեւանում

Ամիսներ անց կրկին «**Ազգի**» հյուրն էր Բուենոս Այրեսի (Արգենտինա) «Հայկական կինո» կազմակերպության հիմնադիր նախագահ Ժակ Պողոսյանը: Հիշեցնեմ, որ մոտ 10 տարվա պատմություն ունեցող այդ կազմակերպությունը Բուենոս Այրեսի ՀԲԸՄ-ի աջակցությամբ ամիսը մեկ անգամ ցուցադրում է հայկական ֆիլմեր, կազմակերպում կինոլեկտորիումներ, դասախոսություններ եւ հանդիպումներ հայ անվանի արվեստագետների հետ: Ուշագրավ է նաեւ, որ այդ ծրագրի շրջանակներում մշտապես տեղ են գտնում աշխարհի տարբեր կինոփառատոներում ներկայացված հայկական ֆիլմերը:




Ինչպես «**Ազգի**» հետ զրույցում ասաց Ժակ Պողոսյանը. «Հայաստանում հավատարմագրված Արգենտինայի դեսպանության հետ դեկտեմբերի 4-13-ը Թումանյան 42 հասցեում գտնվող «Ակումբում» կանցկացվի արգենտինական կինոյի լավագույն ֆիլմերի փառատոնը: Փառատոնում ընդգրկված ֆիլմերը գեղարվեստական են` ոճական առումով տարբեր: Հետաքրքրական ու գեղեցիկ է նկարված «Անիսետո» ֆիլմը, որը ներկայացնում է արգենտինյան կրքոտ պարերի պատմությունը: Կան նաեւ ժամանակակից, պատմական եւ դրամատիկ սյուժեներով նկարված ֆիլմեր, որոնք կցուցադրվեն անգլերեն լեզվով»: Պրն Պողոսյանը նշեց, որ «Հայկական կինո» կազմակերպությանը մշտապես աջակցում է Արգենտինայում Հայաստանի դեսպան Վահագն Մելիքյանը: Եվ այս փառատոնի կազմակերպմանը նաեւ աջակցել է դեսպանությունը:

Ժակ Պողոսյանը ընտրվել է «Կին» միջազգային 9-րդ փառատոնի ժյուրիի անդամ, որը անցկացվելու է դեկտեմբերի 3-7-ը, Երեւանում:

Նշեմ նաեւ, որ պրն Պողոսյանը հայ կինոյի եւ կինոգործիչների մասին հաճախակի վերլուծական հոդվածներ է տպագրում իսպանական մամուլում եւ այժմ էլ աշխատում է 2013 թվականին կազմակերպվող «Ոսկե ծիրան» կինոփառատոնի եւ «Հայկական կինո» կազմակերպության 10-ամյակների հոբելյանական ծրագրերի շուրջը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Հայ բռնցքամարտիկներից չորսը հաղթահարեցին առաջին փուլը



Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում շարունակվում է բռնցքամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունը, որում ընթացող մենամարտերն աչքի են ընկնում համառ մրցապայքարով:

Բնականաբար, առաջին հերթին ուշադրության կենտրոնում հայ բռնցքամարտիկների մասնակցությամբ մենամարտերն են: Առաջին փուլի արգելքը հաջողությամբ հաղթահարեց նաեւ Հայրիկ Նազարյանը: Մինչեւ 46-49 կգ քաշային բռնցքամարտիկի մրցակիցն իտալացի Ջիանլուկա Կոնսելմոն էր: Առաջին ռաունդում հայ բռնցքամարտիկը հաղթեց 10-5 հաշվով: 2-րդ եւ 3-րդ ռաունդներում Նազարյանը եւս վստահ մենամարտեց ու հանդիպումը շահեց 21-12 հաշվով:

Գավառցի բռնցքամարտիկը մենամարտից հետո հետեւյալն ասաց. «Առաջին մենամարտս էր, ուստի լարվածությունը մեծ էր: Ուրախ եմ, որ հաղթեցի եւ հնարավորություն ստացա շարունակելու պայքարը: Կախաստեմ մնացած 4 մենամարտերն էլ հաղթանակով ավարտել: Մրցակցիս հնարավորություններին ծանոթ չէի, բայց զգացի, որ նա տեխնիկապես թույլ է պատրաստված: Ինչ խոսք, երկրպագուների աջակցությունը ոգեւորում է մեզ: Դա նաեւ պարտավորեցնող է: 2-րդ անգամ եմ մասնակցում աշխարհի առաջնությանը: Ինձ այստեղ ավելի վստահ եմ զգում»:

Քիչ անց դահլիճում հավաքված մարզասերներն ուրախանալու եւս մեկ առիթ ունեցան: Իր առաջին մենամարտը հաղթանակով ավարտեց Գոռ Երիցյանը՝ 10-5 հաշվով պարտության մատնելով չինացի Լիու Յու Լինին: 64 կգ քաշային կարգում հանդես եկող հայ բռնցքամարտիկն առաջին անգամ է մասնակցում աշխարհի երիտասարդական առաջնությանը, սակայն նա մրցակցային զգալի փորձ ունի: Եվրոպայի երիտասարդական առաջնություններում նա բրոնզե մեդալներ է նվաճել: Գոռը բռնցքամարտով զբաղվում է 7 տարի:

Իսկ ահա մինչեւ 60 կգ քաշային կարգում Արման Դարչինյանը չկարողացավ հաղթահարել առաջին փուլի արգելքն ու դուրս մնաց հետագա պայքարից: Նա 7-15 հաշվով պարտվեց Ռուսաստանը ներկայացնող Յունեյն Բայսանգուրովին:

Մինչեւ 91 կգ քաշայինների մրցավեճում վստահ հանդես եկավ Ռաֆայել Սիմոնյանը՝ 19-8 հաշվով պարտության մատնելով վրացի Դաթա Կվիրկվելիային:

# Կրկին Մեսին ընդդեմ Ռոնալդուի



**ՖԻՖԱ-ն ամփոփելով «Ոսկե գնդակի» համար անցկացված մրցույթի արդյունքները, հրապարակել է բոլորից շատ միավոր վաստակած 3 հավակնորդների ցանկը: Պատվավոր մրցանակին հավակնում են «Բարսելոնի» ֆուտբոլիստներ Լիոնել Մեսին ու Անդրես Ինիեստան եւ Մադրիդի «Ռեալի» կիսապաշտպան Քրիշտիանու Ռոնալդուն:**

**Հիշեցնենք, որ 2010-ին «Ֆրանս ֆուտբոլի» կողմից խաղարկվող «Ոսկե գնդակ» մրցանակը, որը տրվում է Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստին, միավորվեց ՖԻՖԱ-ի «Ադամանդե գնդակին» եւ այժմ խաղարկվում է որպես մեկ միասնական մրցանակ ու հանձնվում է աշխարհի լավագույն ֆուտբոլիստին: Մրցույթին մասնակցում են ՖԻՖԱ-ի անդամ երկրների ազգային հավաքականների գլխավոր մարզիչներն ու ավագները: Ընդ որում՝ այս տարվանից սկսած նրանց թույլատրվում է հարցաթերթիկում նշելու նաեւ իրենց երկրի ներկայացուցիչներին:**

**Կարելի է վստահորեն ասել, որ «Ոսկե գնդակին» կտիրանա Մեսին կամ Ռոնալդուն: Նրանք պատվավոր մրցանակի համար առաջին տարին չէ, որ պայքարում են: 2008-ին պորտուգալացի ֆուտբոլիստը նվաճեց դեռեւս «Ֆրանս ֆուտբոլի» մրցանակ հանդիսացող «Ոսկե գնդակը», իսկ վերջին 3 տարիներին մշտապես լավագույնն է ճանաչվել Լիոնել Մեսին: Ընդ որում՝ 2009-ին նա լավագույնն էր թե՛ Եվրոպայում, թե՛ աշխարհում: 2010-ին մրցանակի հավակնորդների եռյակը (նկարում) կազմել էին «Բարսելոնի» ֆուտբոլիստները՝ Մեսին, Խավին եւ Ինիեստան: 2011-ին այդ եռյակում Ռոնալդուն փոխարինեց Ինիեստային, իսկ այս տարի՝ Խավիին:**

**Մեսին շարունակում է բոլորին զարմացնել իր ֆանտաստիկ խաղով ու բարձր արդյունավետությամբ՝ գերազանցելով նախկինում անգերազանցելի թվացող ռեկորդները: Անցած մրցաշրջանում նա Իսպանիայի առաջնությունների արդյունավետության նոր ռեկորդ սահմանեց՝ խփելով 50 գնդակ:**

**Ընթացիկ առաջնությունում էլ նա արդեն 19 գոլ է խփել, 5 անգամ աչքի է ընկել չեմպիոնների լիգայում: Արգենտինացի ֆուտբոլիստն արդեն գերազանցել է լեգենդար Պելեի ցուցանիշը, որն օրացուցային մեկ տարում 75 գոլ էր խփել: Նա մոտ է նաեւ Գերդ Մյուլլերի բացարձակ ռեկորդը գերազանցելուն: Վերջինս օրացուցային մեկ տարում 86 գոլի հեղինակ էր դարձել: Մեսիին մնացել է խփելու եւս 3 գոլ:**

**Քրիշտիանու Ռոնալդուն եւս վերջին տարում շատ լավ է խաղում: Անցած առաջնությունում նա 46 գոլ խփեց, իսկ ընթացիկ մրցաշարում 12 անգամ է գրավել մրցակիցների դարպասները: Չպետք է մոռանալ նաեւ Ռոնալդուի ներդրումը Եվրո-2012-ում Պորտուգալիայի հավաքականի հաջողությունում, որը հասավ մինչեւ կիսաեզրափակիչ, որտեղ միայն հետխաղյա 11 մ հարվածներով զիջեց ապագա չեմպիոն իսպանացիներին: Մասնագետներից շատերի կարծիքով, եթե Մեսին չլիներ, ապա Ռոնալդուն կարժանանար բոլոր անհատական մրցանակներին:**

**Ի տարբերություն Մեսիի, Անդրես Ինիեստան իրեն լավ դրսեւորեց նաեւ ազգային հավաքականում: Նա ճանաչվեց Եվրոպայի առաջնության լավագույն խաղացող: Սակայն «Բարսելոնում» այս տարի նա այնքան էլ լավ տպավորություն չի թողնում, ինչպես նախորդ մրցաշրջանում էր:**

**ՖԻՖԱ-ն անվանել է նաեւ աշխարհի լավագույն մարզչի տիտղոսի հավակնորդներին: Եռյակը կազմել են «Բարսելոնի» գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան, «Ռեալի» գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն եւ աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի հավաքականի գլխավոր մարզիչ Վիսենտե դել Բոսկեն: Հիշեցնենք, որ ՖԻՖԱ-ի մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2013-ի հունվարի 7-ին Ցյուրիխում:**

# Ֆելպսն ու Ֆրանկլինը լավագույնն են ԱՄՆ-ում

Մայքլ Ֆելպսն ու Մելիսա Ֆրանկլինը ճանաչվել են ԱՄՆ-ի լավագույն լողորդներ: Աշխարհահռչակ Մայքլ Ֆելպսը 4-րդ անգամ է արժանանում այդ պատվին: Նա Լոնդոնում կայացած ամառային օլիմպիական խաղերում 6 մեդալ նվաճեց, որից 4-ը՝ ոսկե: Ամերիկացի լողորդն օլիմպիադաներում նվաճած մեդալների ընդհանուր քանակով յուրօրինակ ռեկորդակիր է համաշխարհային սպորտում:

17-ամյա Մելիսա Ֆրանկլինը Լոնդոնում նվաճել էր 4 ոսկե եւ մեկ բրոնզե մեդալ, թիմակիցների հետ համաշխարհային ռեկորդ էր սահմանել 4x100 մետր համալիր լողաոճում: Տարվա լավագույն մարզչի մրցանակը հանձնվել է Մայքլ Ֆելպսի մարզչին՝ Բոբ Բաումանին, որը մարզում է նաեւ Լոնդոնի օլիմպիադայի եռակի չեմպիոնուհի Էլիսոն Շմիտին:

ՇԱԽՄԱՏ

# Արոնյանը կսկսի Նակամուրայի հետ մրցավեճով

**Այսօր Լոնդոնում մեկնարկում է շախմատի ավանդական մրցաշարը 9 շախմատիստների մասնակցությամբ: Մեկնարկային տուրում Լեւոն Արոնյանը սպիտակներով կխաղա Հիկարու Նակամուրայի հետ: Կկայանան նաեւ Մագնուս Կառլսեն-Լյուկ Մակշեյն, Վլադիմիր Կրամնիկ-Ջուդիթ Պոլգար, Գավեյն Ջոնս-Մայքլ Ադամս պարտիաները: Առաջին տուրում խաղից ազատ կլինի աշխարհի ներկայիս չեմպիոն Վիշվանաթան Անանդը: Շրջանաձեւ մրցակարգով անցկացվող մրցաշարի հաղթողը հայտնի կդառնա դեկտեմբերի 10-ին:**

**Ի դեպ, Մագնուս Կառլսենն այս մրցաշարում հանդես կգա առանց մարտավկայի: Մոսկվայում Մեծ Բրիտանիայի դեսպանատունը մուտքի վիզա չի հատկացրել Յան Նեպոմնյաշչուն:**

# Աշխարհի չեմպիոնուհին կորցվի լրացուցիչ մրցախաղում

**Բուլղարուհի Անտուանետա Ստեֆանովային հաջողվեց աշխարհի առաջնության եզրափակիչ մրցախաղի վերջին՝ 4-րդ պարտիայում փրկել իրավիճակը եւ 33-րդ քայլին հաղթել Աննա Ուշենինային: Այսպիսով, մրցախաղում հաշիվը հավասարվեց՝ 2-2: Այնպես որ աշխարհի չեմպիոնուհին կորոշվի այսօր կայանալիք լրացուցիչ մրցախաղում: Սկզբում մրցակցուհիներն արագ շախմատի մրցախաղ կանցկացնեն, իսկ հարկ եղած դեպքում ուժերը կչափեն կայծակնային մրցամարտում:**

# Սերենա Ուիլյամսը տարվա լավագույն թենիսիստուհի



**Պրոֆեսիոնալ թենիսիստուհիների ընկերակցությունը 2012-ի լավագույն թենիսիստուհի է ճանաչել ամերիկուհի Սերենա Ուիլյամսին: Ընթացիկ մրցաշրջանում նա 6 մրցաշարի հաղթող է ճանաչվել, այդ թվում գլխավոր մրցանակների է արժանացել Ուիմբլդոնում եւ ԱՄՆ-ի բաց առաջնությունում, ինչպես նաեւ Ստամբուլում կայացած տարվա եզրափակիչ մրցաշարում:**

**Մարզական իր հարուստ կարիերայում Սերենան արդեն 4-րդ անգամ է լավագույնը ճանաչվում: Յուրօրինակ ռեկորդակիրը գերմանուհի Շտեֆի Գրաֆն է, որը 8 անգամ արժանացել է տարվա լավագույն թենիսիստուհու մրցանակին: 7 անգամ դափնեկիր է դարձել Մարտինա Նավրատիլովան:**

# Սկոլարին վերադարձավ Բրազիլիայի հավաքական

Լուիս Ֆելիպե Սկոլարին գլխավորեց Բրազիլիայի ֆուտբոլի ազգային հավաքականը: Նա հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում կփոխարինի օրերս պաշտոնանկ արված Մանո Մենեզեսին: Նրա գլխավորությամբ Բրազիլիայի հավաքականն անցկացրած 40 հանդիպումներից 27-ում էր հաղթել: Մենեզեսի համար միակ գլխավոր փորձությունը Լոնդոնի օլիմպիական ամառային խաղերի ֆուտբոլի մրցաշարն էր, որում բրազիլացիները բավարարվեցին 2-րդ տեղով՝ եզրափակիչում պարտվելով Մեքսիկայի հավաքականին:

Ընդհանուր առմամբ Մենեզեսի պաշտոնանկությանը հավանություն տվեցին շատերը: Միայն Զիկոն էր դեմ արտահայտվել, նշելով, որ մարզչի աշխատանքը գնահատվում է միայն աշխարհի առաջնությունում, այլ ոչ թե ընկերական մրցախաղերում:

Լուիս Ֆելիպե Սկոլարին 2-րդ անգամ է ստանձնում Բրազիլիայի հավաքականի ղեկը: Նա այդ պաշտոնում առաջին անգամ նշանակվել էր 2001-ին: Նրա գլխավորությամբ բրազիլացիները ոչ միայն աշխարհի առաջնության ուղեգիր նվաճեցին, այլեւ 2002-ին Հարավային Կորեայում եւ Ճապոնիայում կայացած ֆուտբոլի համաշխարհային ստուգատեսում դարձան ուժեղագույնը: Ի դեպ, դա Բրազիլիայի հավաքականի վերջին խոշոր հաջողությունն էր աշխարհի առաջնություններում:

2003-ին Սկոլարին գլխավորեց Պորտուգալիայի հավաքականը, որը նախապատրաստվում էր հաջորդ տարի սեփական հարկի տակ անցկացվելիք Եվրոպայի առաջնությանը: Սկոլարիի գլխավորությամբ պորտուգալացիները հասան մինչեւ եզրափակիչ, որտեղ պարտվեցին հույներին: 2006-ի աշխարհի առաջնությունում էլ Պորտուգալիայի հավաքականը գրավեց պատվավոր 4-րդ տեղը: Նա հավաքականը գլխավորեց մինչեւ 2008-ի Եվրոպայի առաջնության ավարտը, որում պորտուգալացիները հասան մինչեւ կիսաեզրափակիչ:

Այնուհետեւ Սկոլարին ստանձնեց Լոնդոնի «Չելսիի» ղեկը: Լոնդոնում նա աշխատեց կես տարուց մի քիչ ավելի: Ռոման Աբրամովիչը շուտով հրաժարվեց բրազիլացի մասնագետի ծառայություններից: Վերջինս պայմանագրով նախատեսված 15 մլն ֆունտ ստեռլինգ փոխհատուցում էր պահանջում, սակայն բանակցությունների արդյունքում Սկոլարին համաձայնվեց ստանալ այդ գումարի կեսը:

«Չելսիից» հեռանալուց հետո Սկոլարին աշխատեց ուզբեկական «Բունեդկորում» եւ բրազիլական «Պալմեյրասում»: Վերջինում 3 տարի աշխատելուց հետո Սկոլարին այս տարվա հոկտեմբերին հեռացավ թիմից:

Ի դեպ, 2010-ին, երբ Բրազիլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Դունգան պաշտոնանկ էր արվել, Սկոլարիին առաջարկել էին գլխավորել հավաքականը: Սակայն նա հայտարարել էր, որ պատրաստվում է հաջորդ 2 մրցաշրջաններում էլ մարզել «Պալմեյրասը»: Իսկ Բրազիլիայի ազգային հավաքականը երազում է գլխավորել 2014-ի աշխարհի առաջնության շեմին, որպեսզի փառքով ավարտի մարզչական իր կարիերան եւ թոշակի գնա:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Կ. Պոլսի Սուրբ Փրկիչ հիվանդանոցը 180 տարեկան է

*3-րդ էջից*

Քաղաքի ծայրամասում գտնվելը չի խանգարում, որ Սուրբ Փրկիչը մնա ազգային կյանքի կենտրոնատեղիներից մեկը: Բարեգործական նպատակներով զանազան մշակութային միջոցառումներ եւ ցուցահանդեսներ են անցկացվում «Բիլեկ» շենքում, որի կենվորները հայ համայնքի նախկին գործիչներ են, այդ թվում` մտավորականներ, դպրոցների տնօրեններ եւ այլն:

Այդ շենքում ընթացիկ տարվա հունիսի 4-ին Սուրբ Փրկչի 180-ամյակի միջոցառումների շրջանակում անցկացվեց Օսմանյան կայսրությունում հայերի պատմությանը նվիրված ցուցահանդես, որի կազմակերպիչը պատմաբան, Սուրբ Փրկչի վարչական խորհրդի անդամ, 1949-ին հիմնված «Սուրբ Փրկիչ» երկլեզու ամսագրի գլխավոր խմբագիր Արսեն Յարմանն էր: Նա հեղինակն է թուրքերեն հրատարակված մի ծավալուն ակադեմիական աշխատության:

1961-ին հիվանդանոց է այցելել Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն, 1964-ին` աշխարհահռչակ գրող Վիլյամ Սարոյանը:

170 մահճակալ ունեցող հիվանդանոցը ամեն օր ընդունում է 700-900 հիվանդների (մեծ մասամբ թուրքեր), մատուցում է օրական 1800 ճաշ, օթեւան է ծառայում 450 անձանց համար, որոնք հիմնականում հայ համայնքի տարեցներ են: Նորագույն տեխնոլոգիաներով հանդերձավորված հիվանդանոցը Թուրքիայում լավագույն բժշկական կենտրոնն է հոգեբուժության, ուռուցքաբանության եւ մանկաբարձության ոլորտներում: Հայ եւ թուրք մասնագետներից կազմված բուժանձնակազմը մեծ հարգանք է վայելում երկրում: Ի դեպ, մտային խանգարումներ ունեցող հինգ տասնյակ երեխաներ օթեւանել են հիվանդանոցի հատուկ կողաշենքում, որտեղ նրանք կարող են ցմահ բնակվել որբանալու դեպքում: 2008 թվականին հիվանդանոցը նոր սարքավորումներ ստացավ Լիսաբոնի Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի միջոցներով: Ներկայումս ձեւավորվում է քաղցկեղաբուժության հատուկ բաժանմունք:



*Հիվանդանոցի միջանցքը*

Սուրբ Փրկիչ հիվանդանոցի կառավարիչը անկախ վարչական խորհուրդն է, որը կազմված է տասներկու հայ երեւելիներից եւ որի նախագահն է Պետրոս Սիրինօղլուն: Այդ մեծահարուստ գործարարը Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի հետ հայ համայնքի ներկայացուցչի դեր է կատարում թուրքական իշխանությունների մոտ, քանզի համայնքը գլխատված է (Հրանտ Դինքի սպանությունը եւ Մեսրոպ Բ պատրիարքի տկարամտությունը):

Թեեւ Սուրբ Փրկչի տնօրենությունը ընդհանուր լեզու է գտնում Թուրքիայում կառավարող չափավոր իսլամիստների հետ, բայց կալվածքների հարցում զերծ չի մնում տհաճություններից: Այսպես, վարչապետ Էրդողանը 2004-ին Սուրբ Փրկիչ կատարած այցելության ժամանակ խոսեց Թուրքիայում խաղաղ գոյակցության արժանիքների մասին, պաշտպանեց հայերի լիարժեք քաղաքացիության իրավունքը, բայց շրջանցեց 1985-ին պետության կողմից Սուրբ Փրկչին կից հողատարածքի առգրավման հարցը: 43160 քառակուսի մետր մակերեսով այդ տեղանքը Զեյթինբուռնուի մունիցիպալիտետին էր փոխանցվել մարզահրապարակի կառուցման ակնկալիքով: Վարչապետի հրահանգին հակառակ` Ստամբուլի դատարաններից մեկը վերջերս վճիռ կայացրեց այդ հողատարածքը իր օրինական տիրոջը վերադարձնելու մասին:



*Սուրբ Փրկիչ եկեղեցին հիվանդանոցի տարածքում*

Հենց այդ տարածքի վրա Սուրբ Փրկիչը նախատեսում է կառուցել հիվանդանոցային նոր կենտրոն: Բացի այդ կալվածքից, Սուրբ Փրկչի վարչական խորհուրդը Ստամբուլում ունի անշարժ կայք, որի մի մասը կառուցվել է անձամբ սուլթանի նվիրատվություններով: Ավանդույթն ու արդիականությունը միախառնելով` հաստատությունը զարգանում է, հպարտություն պատճառելով աշխարհի հայերին եւ իր այցելուներին:

**Ըստ France-Arménie-ում ՏԻԳՐԱՆ ԵԿԱՎՅԱՆԻ հոդվածի պատրաստեց ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆԸ**

***ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ***

# «Եղանակային պայմանները» կարծես թե լավ են ԼՂՀ-ում

*1-ին էջից*

Սա ինքնին արդեն «նոր առաջարկ» լինելով` իր հերթին նշանակում է, որ բանակցությունների սեղանին այնպիսի առաջարկներ են եւս հայտնվել, որոնց վրա դեռ երկարատեւ աշխատանք է պահանջվում` նախքան նախագահների ուշադրությանն արժանացնելը, ու հենց այդ աշխատանքն իրականացնելու համար «կողմերը համաձայնել են շարունակել աշխատանքը ԱԳ նախարարների մակարդակով»: Ընդ որում, դատելով հանգամանքից, որ Մինսկի խմբի համանախագահները ամենեւին էլ չեն ակնարկում մադրիդյան սկզբունքներից հրաժարվելու մասին, հարկ է նկատել, որ նրանց բերած «նոր առաջարկները» ամենեւին էլ չեն փոխարինում մադրիդյան սկզբունքներին: Ուրեմն խոսքն այստեղ բանակցությունների ձեւաչափում որոշակի նորություն մտցնելու մասին է, ու կրկնենք, այս լուրը համանախագահությունը հարկ համարեց առաջինը իրազեկել Ստեփանակերտին: Եթե «նոր առաջարկները» չեն վերաբերում սեղանին դրված սկզբունքներին, ու եթե ակնհայտորեն չեն վերաբերում նաեւ Մինսկի խմբի համանախագահության կազմի փոփոխությանը, ընդ որում նաեւ մանդատի, քանի որ հակառակ պարագայում համանախագահությունն ուղղակի կակնարկեր այդ մասին, ուրեմն կարելի է եզրակացնել, որ Մինսկի խումբը «նոր առաջարկներ» ասելով նկատի ունի բանակցությունների սեղանի կազմի վերանայումը, մասնավորաբար Ստեփանակերտին ընդգրկելը: Այս համատեքստում ամենեւին պատահական չի թվում, որ տարածաշրջանային վերջին այցը միջնորդները սկսեցին հենց Ստեփանակերտից` հասկապես, կարեւորելով Ղարաբաղի «դե ֆակտո» իշխանություններին իրազեկելը «նոր առաջարկների» մասին, բացի սրանից, նախօրեին Երեւանում մեկնարկած «Տարածաշրջանային անվտանգության դինամիկան Հարավային Կովկասում» միջազգային գիտաժողովում ՀՀ նախագահն ընդգծեց. «...հույժ կարեւոր է ԼՂՀ-ի վերադարձը հակամարտության կարգավորման գործընթաց»: Հարկ է նկատել, որ միջնորդներից «նոր առաջարկներ» ստանալուց հետո Իլհամ Ալիեւը որոշակի վերաձեւումներ է կատարել սեփական աշխատակազմում, մասնավորաբար աշխատակազմի արտաքին քաղաքականության հարցերի բաժնի պետ Նովրուզ Մամեդովին նշանակելով նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ինչը կարող է նշանակել, որ Իլհամ Ալիեւը ավելի է մոտեցնում սեփական աշխատակազմն ու երկրի արտաքին քաղաքականությունն իրականացնող ԱԳՆ-ն` կարծես որոշակի վերահսկելով վերջինիս հավատարիմ Նովրուզ Մամեդովի միջոցով:

Եզրակացնենք ուրեմն, որ Հայաստանի ու Ադրբեջանի ԱԳ նախարարները պետք է աշխատեն ոչ այնքան մադրիդյան սկզբունքների առանձին կետերի փոխհամաձայնեցման կամ լրացման վրա, ոչ թե Մինսկի խմբի համանախագահության կազմը վերանայելու ուղղությամբ, քանի որ «կողմերը համաձայնել են շարունակել աշխատանքը», տրամաբանորեն` հենց Մինսկի խմբի միջնորդությամբ, այլ պետք է աշխատեն Մինսկի խմբի ներկայացրած «նոր առաջարկներ»-ի շուրջը, որոնք, բացառման սկզբունքով, վերաբերում են միայն բանակցությունների սեղանի կազմը վերանայելուն, քանի որ, ինչպես Մինսկի խումբն ինքն է բազմիցս ընդգծել. «Վաղ թե ուշ Ստեփանակերտը միանալու է բանակցություններին»: Մնում է միայն ընդգծել, որ Ստեփանակերտի վաղ թե ուշ միանալը բանակցություններին կախված է Բաքվի` հակամարտությունը կարգավորված տեսնելու պատրաստակամությունից:




# Էմմա Թադիոսյան-Սողոյանը պարգեւատրվել է

**Տիկին Էմմա Թադիոսյան-Սողոյանը, որը Սաութֆիլդ, Մի-ի Հովհաննես Մկրտիչ եկեղեցու երկարամյա անդամն ու մեկենասն է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի, նոյեմբերի 11-ին Սաութֆիլդի եկեղեցու սրահում ճաշկերույթի ընթացքում պարգեւատրվել է «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով ու հայրապետական կոնդակով: Նրան այս պարգեւը շնորհել է Գարեգին Երկրորդ կաթողիկոսը:**

**Տիկին Թադիոսյան-Սողոյանը եւ նրա հանգուցյալ ամուսինը` Գալուստ Քարլ Սողոյանը, Ս. Էջմիածնի մի շարք ծրագրերի մեկենասներն են եղել: Ծրագրերից հատկապես կարեւոր է 2007-ին Մայր աթոռին 18 հայերեն գրչագիր մատյաններ նվիրելու որոշումը: Տիկին Թադիոսյան-Սողոյանը նշել է, որ գրչագիր մատյաններ հավաքելու գործը ինքն ու ամուսինը նախաձեռնել էին 40 տարի առաջ` ներշնչված լինելով Փառեն եպիսկոպոս Ավետիքյանից այն ժամանակ, երբ վերջինս նրանց ծանոթացրել է Էջմիածնի ձեռագրաց հավաքածուին:**

**Ի. Պ.**

# Հայկական համագումարը գուժում է Փիթեր Կեզիրյանի մահը

Խմբագրությանը ուղարկված մամլո հաղորդագրությամբ Ամերիկայի հայկական համագումարը գուժում է հոգաբարձուների վարչության անդամ Փիթեր Կեզիրյանի անժամանակ (նա 48 տարեկան էր) մահը, որը տեղի է ունեցել անցյալ շաբաթ:

Փիթերը հաջողակ էր ինչպես իրավաբանական, այնպես էլ գործարարական աշխարհի հարցերում եւ դարձել էր Լոս Անջելեսի ամերիկյան բժիշկների կորպորատիվի կորպորատիվ ստրատեգիական զարգացման գծով առաջին փոխնախագահը: Նա նաեւ նախագահել էր դեռ Ջորթաունի համալսարանի ուսանող լինելու ժամանակ, Model United Nations խորհրդակցային ծրագիրը, որին մասնակցել էին 3200 հոգի: Համագործակցել էր Կալիֆոռնիայի կառավարիչներ Ջորջ Դոյմեջյանի եւ Փիթ Ուիլսոնի հետ: Վերջինս նրան նշանակել էր Կալիֆոռնիայի կորպորացիաների ընդհանուր խորհրդատու: Ի հավերժացումն նրա ծառայությունների` հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշել է կրթաթոշակ հիմնել նրա անունով Վաշինգտոնում Թերջանյան Թոմաս ամառային դասընթացների ուսանողների համար: Հ. Ծ.




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 30.11.2012, գինը` 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում` Արշակունեաց 2: